

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի հրահանգ**

**Շենքերի էներգաարդյունավետության մասին**

**Պաշտոնական տեղեկագիր L 153, 18.06.2010թ., էջ 0013 - 0035**

(վերամշակված)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 194 (2) հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով սովորական օրենսդրական ընթացակարգի համաձայն [3],

Քանի որ

1) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի հրահանգը շենքերի էներգաարդյունավետության մասին [4] փոփոխվել է [5]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պահանջվում են էական փոփոխություններ, կանոնակարգը պետք է վերամշակվի տեքստում պարզություն մտցնելու նկատառումներով,

2) էներգիայի արդյունավետ, խելամիտ, ռացիոնալ և էկոլոգիապես անվտանգ օգտագործումը վերաբերում է, մասնավորապես, նավթային ապրանքներին, բնական գազին և պինդ վառելիքներին, որոնք հանդիսանում են ինչպես էներգիայի հիմնական, այնպես էլ ածխաթթու գազի արտանետումների գլխավոր աղբյուրներ, 3) շենքերի էներգասպառումը կազմում է Միության ամբողջ էներգասպառման 40%-ը: Ոլորտն ընդլայնվում է, որն էլ հանգեցնում է էներգասպառման ավելացմանը: Հետևաբար, էներգասպառման կրճատումը և շինարարության ոլորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը հանդիսանում են ջերմոցային գազերի արտանետումների, ինչպես նաև էներգիայից Միության կախման մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ միջոցներից: Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի

առավել լայն օգտագործումը, ինչպես նաև Միության ներսում էներգասպառման նվազեցմանն ուղղված միջոցները թույլ կտային Միությանը համապատասխանել Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) Կիոտոյի արձանագրությանը և կատարել ինչպես գլոբալ տաքացման մակարդակը 2 °C-ից ցածր սահմանում պահելու, այնպես էլ մինչ 2020 թվականը ջերմոցային գազի ընդհանուր արտանետումների մասով 1990 թվականին արձանագրված մակարդակից առնվազն 20 %-ով, իսկ միջազգային համաձայնության ձեռք բերման դեպքում՝ 30 %-ով պակաս ցուցանիշ ապահովելուն ուղղված իր երկարաժամկետ պարտականությունները: Էներգասպառման կրճատումը և վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի առավել լայն օգտագործումը մեծ դեր ունեն էներգամատակարարման անվտանգության, տեխնոլոգիական զարգացման խթանման և մասնավորապես գյուղական վայրերում տարածքային զարգացման և աշխատանքային հնարավորությունների ստեղծման գործում,

4) էներգիայի պահանջարկի կառավարումը կարևոր գործիք է, որը հնարավորություն է ընձեռում Միությանը ազդել էներգետիկ համընդհանուր շուկայի և հետևաբար նաև միջնաժամկետ և երկարաժամկետ էներգամատակարարման անվտանգության վրա,

5) 2007 թվականի մարտ ամսին կայացած Եվրոպական խորհրդի նիստի ընթացքում շեշտվեց Միությունում էներգախնայողության բարձրացման անհրաժեշտությունը, որը կնպաստի մինչ 2020 թվականը Միության էներգասպառումը 20%-ով կրճատելուն ուղղված խնդրի իրականացմանը և նախատեսվեց «էներգախնայողության գործողությունների ծրագիր, պոտենցիալի իրականացում» Հանձնաժողովի հաղորդագրությամբ սահմանված գերակայությունների հիմնավոր և շտապ իրականացում: Նշված գործողությունների ծրագրով սահմանվեց շենքերի ծախսարդյունավետ էներգատնտեսման կարևոր պոտենցիալը: Եվրոպական պառլամենտն իր 2008 թվականի հունվարի 31-ի որոշման մեջ պահանջեց 2002/91/ԵՀ հրահանգի դրույթների ամրապնդում, որը բազմիցս է կոչ արել, ինչպես նաև պահանջեց վերջին հնարավորությամբ՝ այն է՝ էներգիայի վերաբերյալ ռազմավարական երկրորդ ծրագրի մասին 2009 թվականի փետրվարի 3-ի իր որոշմամբ, պարտադիր դարձնել մինչ 2020 թվականը 20% էներգախնայողության նպատակի իրականացումը: Ավելին, մինչ 2020 թվականը ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը կրճատելուն ուղղված անդամ պետությունների պարտավորությունների կատարման մասով [6]ձեռնարկված միջոցների մասին Եվրոպական պառլամենտի՝ 406/2009/ԵՀ որոշման և Խորհրդի՝ 2009 թվականի ապրիլի 23-ի որոշման մեջ սահմանված են CO<sub>2</sub>-ի նվազեցման ազգային պարտադիր սահմանաչափերը, որոնք

Էներգախնայողության տեսակետից վճռորոշ կլինեն շինարարության ոլորտում և Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/28/ԵՀ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման խթանման մասին հրահանգով [7] նախատեսված է մինչ 2020 թվականը էներգախնայողության խթանում Միության ընդհանուր էներգասպառման 20 %-ը կազմող վերականգնվող աղբյուրների կիրառման իմպերատիվ նպատակի համատեքստում: 6) 2007 թվականի մարտ ամսին կայացած Եվրոպական խորհրդի նիստի ընթացքում վերահաստատվեց Միության ամբողջ տարածքում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ստացման մասով Միության պարտավորությունը՝ հաստատելով մինչ 2020 թվականը վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 20% կազմող իմպերատիվ սահմանաչափը: 2009/28/ԵՀ հրահանգով սահմանվում է վերականգնվող աղբյուրներից էներգիայի ստացման խթանման ընդհանուր համակարգ,

7) անհրաժեշտ է սահմանել շենքերում էներգատնտեսման չիրագործված մեծ պոտենցիալի իրականացմանը և այդ ոլորտում անդամ պետությունների ստացած արդյունքերի միջև մեծ տարբերությունների կրճատմանն ուղղված ավելի կոնկրետ քայլեր,

8) շենքերի էներգարդյունավետության հետագա բարելավմանն ուղղված միջոցներ ձեռնարկելիս պետք է հաշվի առնել կլիմայական և տեղային պայմանները, ինչպես նաև շենքերի ներսի կլիմայական միջավայրը և ծախսարդյունավետությունը: Նշված միջոցները չպետք է ազդեն շենքին վերաբերող այլ պահանջների վրա, ինչպիսիք են շենք մուտք գործելու հնարավորությունը, անվտանգությունը և շենքի նպատակային կիրառումը,

9) Շենքերի էներգաարդյունավետությունը պետք է հաշվարկվի ազգային և տարածքային մակարդակով տարբերակված մեթոդաբանության հիման վրա: Այն ջերմային առանձնահատկություններից բացի ներառում է նաև գնալով ավելի կարևոր դեր ունեցող այլ բաղադրատարրեր, ինչպիսիք են օդորակման սարքավորումները, վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի կիրառումը, պասսիվ ջեռուցման և հովացման տարրերը, սովերարկումը, ներսի օդի որակը (ՆՕՈ), բավարար ցերեկային լույսը և շենքի նախագիծը: Էներգաարդյունավետության հաշվարկման մեթոդաբանությունը պետք է հիմնված լինի ոչ միայն ջեռուցում պահանջող եղանակի դեպքում հաշվարկների վրա, այլ նաև պետք է ներառի շենքի տարեկան էներգաարդյունավետությունը: Այդ մեթոդաբանության մեջ պետք է հաշվի առնվեն գործող եվրոպական ստանդարտները,

10) անդամ պետությունների բացառիկ պատասխանատվությունը շենքերի և դրանց կառուցվածքային տարրերի համար էներգաարդյունավետության նվազագույն պահանջների սահմանումն է: Այդ պահանջները պետք է սահմանվեն այնպես, որ ապահովեն կատարվող ներդրումների և շենքի շահագործման ողջ ընթացքում էներգիայի խնայված ծախսերի՝ ծախսային տեսանկյունից օպտիմալ բալանսը՝ չհակասելով ծախսային տեսանկյունից օպտիմալ էներգախնայողության չափերի համեմատությամբ ավելի էներգախնայող նվազագույն պահանջներ սահմանելու անդամ պետությունների իրավունքին: Դրույթներ պետք է նախատեսվեն, որպեսզի անդամ պետությունները հնարավորություն ունենան պարբերաբար վերանայել իրենց տարածքում շենքերի էներգաարդյունավետության նվազագույն պահանջները՝ հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը,

11) Ծախսարդյունավետ և ծախսային տեսանկյունից օպտիմալ էներգախնայողության չափերով, որոշ հանգամանքներում, ինչպես օրինակ կլիմայական պայմանների տարբերությունների դեպքում, արդարացվում են անդամ պետությունների կողմից շենքերի կառուցվածքային տարրերի համար ծախսարդյունավետ և ծախսային տեսանկյունից օպտիմալ պահանջների սահմանումը, որոնք գործնականում սահմանափակում են անգամ Միության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին համապատասխանող շին./ապրանքների կիրառումը՝ պայմանով, որ այդ պահանջները շուկայի համար ոչ արդարացի կերպով խոչընդոտ չեն հանդիսանա,

12) Տեխնիկական շինարարական համակարգերի համար էներգաարդյունավետության պահանջներ սահմանելիս անդամ պետությունները հնարավոր և համապատասխան դեպքերում պետք է կիրառեն ներդաշնակեցված գործիքներ՝ մասնավորապես փորձարկման և հաշվարկման մեթոդներ և էներգախնայողության դասակարգումներ, որոնք մշակվել են էներգիա սպառող ապրանքների համար էկոդիզայնի պահանջների սահմանման համար շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը [8] և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի Պիտակավորմամբ և արտադրանքի ստանդարտ տեղեկությունների միջոցով էներգիա սպառող ապրանքների էներգասպառման և այլ ռեսուրսների վերաբերյալ նշման մասին հրահանգը [9] իրականացնող միջոցների համաձայն՝ նպատակ ունենալով ապահովել նման նախաձեռնությունների միջև համաձայնեցվածությունը և հնարավոր չափով նվազագույնի հասցնելու համար շուկայի պոտենցիալ մասնատումը,

13) սույն Հրահանգը չի հակասում Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի (ԵՄԳՊ) 107-րդ և 108-րդ հոդվածներին: Հետևաբար սույն Հրահանգում

օգտագործված «խրախուսական միջոց» տերմինը չպետք է նշանակի պետական օժանդակություն,

14) Հանձնաժողովը պետք է սահմանի համեմատական մեթոդաբանության համակարգ՝ էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկման համար: Անդամ պետությունները պետք է օգտագործեն այդ համակարգը՝ արդյունքներն իրենց կողմից ընդունված էներգաարդյունավետության նվազագույն պահանջների հետ համեմատելու համար: էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների և էներգաարդյունավետության գործող նվազագույն պահանջների միջև էական՝ 15 %-ը գերազանցող անհամապատասխանությունների դեպքում անդամ պետությունները պետք է արդարացնեն/հիմնավորեն այդ տարբերությունը կամ նախատեսեն համապատասխան քայլեր՝ այդ անհամապատասխանությունը նվազեցնելու ուղղությամբ: Շենքի կամ դրա կառուցվածքային տարրերի տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածը պետք է որոշվի անդամ պետության կողմից՝ հաշվի առնելով տնտեսական առումով շահագործման հատկանշական ժամանակահատվածներ սահմանելու առկա գործելակերպը և փորձը: Այդ համեմատության արդյունքների և այդ արդյունքների ստացման համար օգտագործված տվյալների վերաբերյալ հաշվետվություններ պետք է պարբերաբար ներկայացվեն Հանձնաժողովին: Նշված հաշվետվությունները հնարավորություն կտան Հանձնաժողովին գնահատել և հաշվետվություն պատրաստել էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հասնելուն ուղղված անդամ պետությունների ձեռքբերումների վերաբերյալ,

15) շենքերն ազդեցություն ունեն երկարատև էներգասպառման վրա: Հաշվի առնելով գոյություն ունեցող շենքերի վերականգնման երկարատև ցիկլը՝ նոր և հիմնական վերականգնման ենթակա գոյություն ունեցող շենքերը, հետևաբար, պետք է բավարարեն տեղի կլիմային հարմարեցված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները: Քանի որ այլընտրանքային էներգամատակարարման համակարգերի կիրառումը ընդհանուր առմամբ իր բոլոր հնարավորություններով դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ, ապա նոր շենքերում՝ անկախ դրանց չափսերից, այլընտրանքային էներգամատակարարման համակարգեր կիրառելիս պետք է առաջին հերթին ապահովվի ջեռուցման և հովացման համար անհրաժեշտ էներգիայի սպառումը ծախսային օպտիմալության մակարդակների հասցնելու սկզբունքի պահպանումը,

16) գոյություն ունեցող շենքերի հիմնական վերականգնման աշխատանքները՝ անկախ դրանց ծավալներից, հնարավորություն են ընձեռում էներգաարդյունավետության բարձրացման նպատակով ծախսարդյունավետ միջոցների ձեռնարկման համար: Ելնելով ծախսարդյունավետության նկատառումներից՝ հնարավոր կլինի սահմանափակել էներգաարդյունավետության նվազագույն պահանջները՝ վերականգնված այն հատվածների համար, որոնք առավել կարևոր են շենքի էներգաարդյունավետության տեսանկյունից: Անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան ընտրելու և «հիմնական վերականգնում» տերմինը սահմանելու ելնելով կամ շենքի պատող կառուցվածքների հարաբերությամբ հաշվարկված մակերեսի տոկոսային թվից, կամ շենքի արժեքից: Այն դեպքում, երբ անդամ պետության կողմից որոշվել է հիմնական վերականգնումը սահմանել ելնելով շենքի արժեքից, ապա կարող են կիրառվել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ակտուարական արժեքը, վերակառուցման ծախսերի վրա հիմնված ընթացիկ արժեքը՝ բացառությամբ այն հողատարածքի արժեքի, որի վրա է գտնվում շենքը,

17) անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ավելացնելու համար այն շենքերի թիվը, որոնք ոչ միայն բավարարում են էներգաարդյունավետության ներկայիս նվազագույն պահանջները, այլ նաև ավելի էներգախնայող են՝ այդպիսով նվազեցնելով թե՛ էներգասպառումը և թե՛ ածխաթթու գազի արտանետումները: Այդ նպատակով անդամ պետությունները գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի թվի ավելացման համար պետք է կազմեն ազգային ծրագրեր և այդ ծրագրերի մասին պարբերաբար զեկուցեն Հանձնաժողովին,

18) էներգախնայողությանն առնչվող միջոցների խրախուսման նպատակով ներդրվում կամ փոփոխվում են Միության ֆինանսական գործիքներ և այլ միջոցներ: Միության մակարդակով այդօրինակ գործիքներ են հանդիսանում, մասնավորապես, Տարածքային զարգացման եվրոպական հիմնադրամի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հուլիսի 5-ի թիվ 1080/2006 կանոնակարգը (ԵՀ) [10], որը փոփոխվել է հնարավորություն տալու համար ավելացնել բնակարանային շինարարության էներգախնայողությանն ուղղված ներդրումների թիվը, հանրային և մասնավոր գործընկերությունների «Եվրոպական էներգախնայող շենքերի վերաբերյալ նախաձեռնությունը», որի նպատակն է խթանել կանաչ տեխնոլոգիաները և նոր ու վերականգնված շենքերում էներգախնայող համակարգերի և նյութերի մշակումը, Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) «ԵՄ էներգետիկայի կայուն ֆինանսավորման նախաձեռնությունը», որի նպատակն է կյանքի կոչել, մասնավորապես, էներգախնայողությանն ուղղված ներդրումները և ԵՆԲ-ի կողմից ղեկավարվող «Մարզըրեթ

հիմնադրամը»՝ 2020 թվականի էներգիայի, կլիմայական փոփոխության և ենթակառուցվածքի եվրոպական հիմնադրամ, 2006/112/ԵՀ հրահանգը փոփոխած Նվազեցված ավելացված արժեքի հարկի վերաբերյալ Խորհրդի 2009 թվականի մայիսի 5-ի 2009/47/ԵՀ հրահանգը [11], կառուցվածքային և համերաշխության հիմնադրամների Ջերեմի՝ փոքր և միջին ձեռնարկությունների համար նախատեսված եվրոպական միացյալ ռեսուրսների գործիքը, էներգախնայողության ֆինանսավորման գործիքը, Մրցակցության և նորարարության շրջանակային ծրագիրը՝ ներառյալ «էներգիայի խելամիտ օգտագործում – Եվրոպա II» ծրագիրը, որը կենտրոնացած է մասնավորապես էներգախնայողության և վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի հետ կապված շուկայի խոչընդոտների վերացման վրա՝ տեխնիկական աջակցության՝ Եվրոպական տեղական էներգետիկ աջակցության ELENA գործիքի միջոցով, Քաղաքապետերի դաշնագիրը, Ձեռնարկատիրության և նորարարության ծրագիրը, ՏՀՏ քաղաքականության աջակցության ծրագիր 2010–ը, Յոթերորդ հետազոտական շրջանակային ծրագիրը: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը ֆինանսավորում է տրամադրում էներգախնայողության հետ կապված միջոցների խթանման նպատակով,

19) Միության ֆինանսական գործիքները պետք է օգտագործվեն սույն Հրահանգի նպատակներին գործնական արդյունք հաղորդելու համար: Դրանք, մասնավորապես, պետք է օգտագործվեն ապահովելու համար ֆինանսավորման համապատասխան և նորարարական եղանակներ, որոնք կխթանեն էներգախնայողությանն ուղղված միջոցների հետ կապված ներդրումները: Դրանք կարող են կարևոր դեր ունենալ էներգախնայողության ազգային, տարածքային և տեղական ֆոնդերի, գործիքների կամ մեխանիզմների ձևավորման գործում, որոնք այդօրինակ ֆինանսական հնարավորությունները տրամադրում են մասնավոր սեփականատերերին, փոքր և միջին ձեռնարկություններին և էներգախնայողության հետ կապված ծառայություններ մատուցող ընկերություններին,

20) Հանձնաժողովին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով անդամ պետությունները պետք է կազմեն սույն Հրահանգով պահանջվող միջոցներից տարբեր՝ գոյություն ունեցող և առաջարկվող այդ թվում նաև ֆինանսական բնույթի միջոցների ցանկեր, որոնք օժանդակում են սույն Հրահանգի նպատակներին: Անդամ պետությունների կողմից թվարկված առկա և առաջարկվող միջոցները կարող են ներառել մասնավորապես, այնպիսիք, որոնք նպատակաուղղված են գոյություն ունեցող իրավական և շուկայական խոչընդոտների նվազեցմանը, ինչպես նաև նոր և գոյություն ունեցող շենքերի

Էներգախնայողության բարձրացմանը միտված ներդրումների և/կամ այլ գործունեությունների խրախուսմանը, այդպիսով պոտենցիալ կերպով նպաստելով Էներգիայի անբավարարության կրճատմանը: Այդ միջոցները կարող են ներառել, բայց չպետք է սահմանափակվեն ազատ կամ սուբսիդացված տեխնիկական աջակցությամբ և խորհրդատվությամբ, ուղղակի սուբսիդիաներով, սուբսիդացված փոխառության ծրագրերով կամ ցածր տոկոսադրույքով փոխառություններով, դրամաշնորհային ծրագրերով, փոխառության երաշխիքի ծրագրերով: Ֆինանսական բնույթի այդ միջոցները տրամադրող պետական մարմինները և մյուս հաստատությունները կարող են այդ միջոցների կիրառումը կապել նշված էներգաարդյունավետության և էներգաարդյունավետության հավաստագրերից բխող հանձնարարականների հետ,

21) անդամ պետությունների հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունը սահմանափակելու համար պետք է հնարավոր լինի սույն Հրահանգով պահանջվող հաշվետվություններն ընդգրկել Էներգիայի վերջնական օգտագործման խնայողության և էներգետիկ ծառայությունների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/32/ԵՀ հրահանգի [12] 14(2) հոդվածում նշված Էներգախնայողության գործողությունների ծրագրերում: Յուրաքանչյուր անդամ պետության պետական սեկտորը շենքերի էներգաարդյունավետության ոլորտում պետք է առաջատարը լինի, և այդ իսկ պատճառով պետական մարմինների կողմից զբաղեցված շենքերի համար ազգային ծրագրերով պետք է սահմանվեն առավել հավակնոտ սահմանաչափեր,

22) շենքի կամ շինության հավանական գնորդի և վարձակալի համար էներգաարդյունավետության հավաստագրի մեջ պետք է ներկայացված լինեն շենքի էներգաարդյունավետությանն առնչվող ստույգ տեղեկություններ, ինչպես նաև այդ էներգաարդյունավետության բարելավման վերաբերյալ գործնական խորհրդատվություն: Տեղեկատվական քարոզարշավներն ապագայում կարող են քաջալերել սեփականատերերին և վարձակալներին բարելավել իրենց շենքի կամ շինության էներգաարդյունավետությունը: Առևտրային շենքերի սեփականատերերի և վարձակալների կողմից փաստացի էներգասպառման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը նույնպես պետք է խրախուսվի, որպեսզի ապահովվի ողջ տվյալների մատչելիությունը՝ անհրաժեշտ բարելավումներ կատարելու նպատակով հիմնավոր որոշումներ ընդունելու համար: Էներգաարդյունավետության հավաստագրով նույնպես պետք է ապահովվի շենքի էներգիայի կարիքների վրա ջեռուցման և հովացման փաստացի ազդեցության, շենքի



առաջնային էներգասպառման և ածխաթթու գազի արտանետումների վերաբերյալ տեղեկատվություն,

23) պետական մարմինները պետք է փորձեն իրականացնել էներգաարդյունավետության հավաստագրի մեջ ներառված հանձնարարականները և այդպիսով օրինակ հանդիսանան: Անդամ պետություններն իրենց ազգային ծրագրերում պետք է ներառեն միջոցներ, որոնք կօգնեն պետական մարմիններին դառնալ էներգախնայողության բարելավումների առաջին կիրառողներից, ինչպես նաև կօգնեն իրականացնել էներգաարդյունավետության հավաստագրերում ներառված հանձնարարականները՝ որքան հնարավոր է շուտ,

24) պետական մարմինների կողմից զբաղեցված, ինչպես նաև հասարակության կողմից հաճախ այցելվող շենքերն օրինակ պետք է լինեն և պետք է ցույց տրվեն, որ հաշվի են առնվում շրջակա միջավայրին առնչվող, ինչպես նաև էներգետիկ նկատառումները և այդ իսկ պատճառով այդ շենքերը պետք է պարբերաբար ենթարկվեն էներգետիկ բնութագրերի հավաստագրման: էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվության տարածումը հասարակության մեջ պետք է ընդլայնվի պարզորոշ կերպով ներկայացնելով էներգաարդյունավետության այդ հավաստագրերը, մասնավորապես, որոշակի չափերի՝ պետական մարմինների կողմից զբաղեցված կամ հասարակության կողմից հաճախակի այցելվող շենքերում, ինչպիսիք են խանութները և առևտրի կենտրոնները, սուպերմարկետները, ռեստորանները, թատրոնները, բանկերը և հյուրանոցները,

25) Վերջին տարիներին եվրոպական երկրներում օդորակման համակարգերի թվի աճ է գրանցվել: Դա լուրջ խնդիրներ է առաջացնում գերծանրաբեռնված ժամերին՝ ավելացնելով էլեկտրաէներգիայի ծախսը և խաթարելով էներգիայի հաշվեկշիռը: Առաջնայնությունը պետք է տրվի այն ռազմավարական ծրագրերին, որոնք բարձրացնում են շենքի ջերմաարդյունավետությունը ամռան ամիսներին: Այդ նպատակով շեշտը պետք է դրվի այն միջոցների վրա, որոնք խուսափում են գերտաքացումից, ինչպիսիք են սովերարկումը և շենքի կառուցվածքի բավարար ջերմակայունությունը, ինչպես նաև հետագա զարգացումները և պասսիվ հովացման տեխնոլոգիաները, և առաջնահերթ այնպիսիք, որոնք բարելավում են ներսի կլիմայական պայմանները և շենքերը շրջապատող միկրոկլիման,

26) բարձր որակավորում ունեցող անձնակազմի կողմից ջեռուցման և օդորակման համակարգերի կանոնավոր տեխնիկական սպասարկումն ու ստուգումը նպաստում է դրանք արտադրանքի հատկորոշմանը համապատասխան ճիշտ սարքավորված վիճակում

պահպանելուն և այդ կերպ ապահովվում է դրանց օպտիմալ աշխատանքը՝ շրջակա միջավայրի, անվտանգության և էներգետիկ տեսանկյունից: Ջեռուցման և օդորակման ամբողջ համակարգի անկախ գնահատումը պետք է կատարվի կանոնավոր ընդմիջումներով՝ շահագործման ողջ ընթացքում, մասնավորապես, մինչ դրա փոխարինումը կամ կատարելագործումը: Շենքի սեփականատերերի և վարձակալների վրա դրված վարչական պարտավորությունները նվազագույնի հասցնելու համար անդամ պետությունները պետք է ջանան հնարավորինս միավորել ստուգման և հավաստագրման գործընթացները,

27) շենքերի էներգաարդյունավետության հավաստագրման, ինչպես նաև ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգման ընդհանուր մոտեցումը, որն իրականացվում է որակավորված և/կամ հավատարմագրված փորձագետների կողմից, որոնց անկախությունը երաշխավորված է օբյեկտիվ չափանիշի հիման վրա, կնպաստի շինարարության ոլորտում էներգատնտեսման ուղղությամբ անդամ պետությունների կողմից գործադրվող ջանքերի համար հավասար մրցակցային պայմանների ստեղծմանը և հավանական սեփականատերերի կամ օգտագործողների համար կապահովի Միության անշարժ գույքի շուկայում էներգաարդյունավետության առումով թափանցիկություն: Էներգաարդյունավետության հավաստագրերի, ինչպես նաև ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգումների որակը Միության ամբողջ տարածքում ապահովելու համար յուրաքանչյուր անդամ պետությունում պետք է սահմանվի վերահսկման անկախ մեխանիզմ,

28) քանի որ տեղական և տարածքային մարմինները քննադատաբար են մոտենում սույն Հրահանգի բարեհաջող իրականացմանը, համապատասխան և անհրաժեշտ դեպքերում՝ կիրառվող ազգային օրենսդրության համաձայն, նրանց հետ պետք է խորհրդակցել և վերջիններիս պետք է ներգրավել ծրագրման խնդիրներում, տեղեկատվության տրամադրման ծրագրերի մշակման գործում, ուսուցման և իրազեկության բարձրացման և սույն Հրահանգը ազգային կամ տարածքային մակարդակով իրականացման գործընթացներում: Այդօրինակ խորհրդատվությունները կարող են նաև տեղի նախագծողների և շենքերի տեսուչների համար անհրաժեշտ աշխատանքների կատարման նպատակով համարժեք ուղղորդման միջոց հանդիսանան: Ավելին, անդամ պետությունները պետք է հնարավորություն տան և քաջալերեն ճարտարապետներին և նախագծողներին պատշաճ կերպով հաշվի առնել էներգախնայողության բարելավումների, վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման և կենտրոնացված ջեռուցման և

հովացման համակարգերի օպտիմալ համակցությունը՝ արդյունաբերական կամ բնակելի տարածքների պլանավորման, նախագծման, կառուցման և վերականգնման ժամանակ,

29) Սարքավորողները և կառուցողները քննադատաբար են մոտենում սույն Հրահանգի բարեհաջող իրականացմանը: Հետևաբար, համապատասխան թվով տեղադրողներ և կառուցողներ պետք է ուսուցման և այլ միջոցների շնորհիվ, ձեռք բերեն էներգախնայման և վերականգնվող էներգիայի հետ կապված անհրաժեշտ տեխնոլոգիաներ տեղադրելու և ինտեգրելու կարողությունների պատշաճ մակարդակ,

30) անդամ պետությունները պետք է հաշվի առնեն Մասնագիտական որակավորումների ճանաչման մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 7-ի 2005/36/ԵՀ հրահանգը՝ [13] սույն Հրահանգում նշված արհեստավարժ փորձագետների փոխադարձաբար ճանաչման նպատակով, իսկ Հանձնաժողովը պետք է շարունակի այդ արհեստավարժ փորձագետների ուսուցման ստանդարտների հետ կապված առաջարկությունների և ուղեցույցների մասով իր կողմից «էներգիայի խելամիտ օգտագործում – Եվրոպա» ծրագրի ներքո ծավալվող գործունեությունը,

31) Միության ոչ բնակելի անշարժ գույքի շուկայում էներգաարդյունավետության թափանցիկության բարձրացման նպատակով ոչ բնակելի շենքերի էներգաարդյունավետության կամավոր հիմունքներով ընդհանուր հավաստագրման համակարգի համար պետք է սահմանվեն համանման պայմաններ: ԵՄԳՊ 291-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի կիրարկող լիազորությունների վերահսկման մեխանիզմների կանոններն ու ընդհանուր սկզբունքները պետք է սահմանվեն նախօրոք՝ սովորական օրենսդրական ընթացակարգի համաձայն ընդունված կանոնակարգի միջոցով: Մինչ այդ նոր կանոնակարգի ընդունումը շարունակվում է կիրառվել Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշումը [14]՝ բացառությամբ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի, որը չի կիրառվում,

32) Հանձնաժողովը պետք է լիազորված լինի ԵՄԳՊ 290-րդ հոդվածի համաձայն ընդունել պատվիրակված ակտեր՝ կապված Հավելված I-ով սահմանված ընդհանուր շրջանակի որոշ հատվածների տեխնիկական առաջընթացին համապատասխանեցման, ինչպես նաև էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկման համար մեթոդաբանական համակարգի սահմանման հետ:

Հատկապես կարևոր է, որ Հանձնաժողովն իր կողմից անցկացվող նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացնի համապատասխան խորհրդատվություններ, այդ թվում՝ փորձագիտական մակարդակով,

33) նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն Հրահանգի՝ շենքերի էներգաարդյունավետության բարձրացման նպատակը, չի կարող բավարար չափով իրականացվել անդամ պետությունների կողմից՝ պայմանավորված շինարարության ոլորտի բարդությամբ և էներգախնայողության մարտահրավերներին համարժեք արձագանքելու ազգային բնակարանային շինարարության շուկայի անկարողությամբ, այն կարող է ավելի լավ իրականացվել Միության մակարդակով՝ ելնելով գործողության մասշտաբից և ազդեցություններից, ինչպես նաև Միությունը կարող է միջոցներ ընդունել՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքներին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

34) ազգային իրավունքում սույն Հրահանգը փոխատեղելու պարտավորությունը պետք է սահմանափակվի այն դրույթներով, որոնք 2002/91/ԵՀ հրահանգի համեմատությամբ էապես տարբեր նորմեր են սահմանում: Չփոփոխված դրույթները փոխատեղելու պարտավորությունը բխում է այդ Հրահանգից,

35) սույն Հրահանգը չպետք է հակասի 2002/91/ԵՀ հրահանգը ազգային իրավունքում փոխատեղելու և այն կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

36) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [15]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Միության շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ՝

## Հոդված 1

### Առարկան

1. Սույն Հրահանգը նպաստում է Միության տարածքում շենքերի էներգաարդյունավետության բարելավմանը՝ հաշվի առնելով դրսի կլիմայական և տեղային պայմանները, ինչպես նաև ներսի կլիմայի պահանջները և ծախսարդյունավետությունը:

2. Սույն Հրահանգը սահմանում է պահանջներ, որոնք վերաբերում են հետևյալներին՝

ա) շենքերի և շինությունների ինտեգրված էներգաարդյունավետության հաշվարկման մեթոդաբանության միասնական ընդհանուր համակարգ,

բ) նոր շենքերի և շինությունների էներգաարդյունավետության նվազագույն պահանջների կիրառում,

գ) էներգաարդյունավետության նվազագույն պահանջների կիրառում՝ հետևյալների առնչությամբ՝

i) գոյություն ունեցող շենքեր, շինություններ և կառուցվածքային տարրեր, որենք ենթակա են հիմնական վերականգնման.

ii) շենքի պատող կառուցվածքների մաս կազմող կառուցվածքային տարրեր, որոնք էական ազդեցություն ունեն շենքի պատող կառուցվածքների էներգաարդյունավետության վրա՝ վերջիններիս արդիականացման կամ փոխարինման դեպքում, ինչպես նաև.

iii) շենքի տեխնիկական համակարգեր՝ դրանց տեղակայման, փոխարինման կամ կատարելագործման դեպքերում.

դ) գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի թվի ավելացմանն ուղղված ազգային ծրագրեր,

ե) շենքերի կամ շինությունների էներգետիկ բնութագրերի հավաստագրում,

զ) շենքերի ջեռուցման և օդորակման համակարգերի կանոնավոր ստուգումներ և

է) էներգաարդյունավետության հավաստագրերի անկախ վերահսկման համակարգեր և ստուգման վերաբերյալ հաշվետվություններ:

3. Սույն Հրահանգով սահմանված պահանջները նվազագույն պահանջներ են և չեն խոչընդոտում ցանկացած անդամ պետության կողմից ավելի խիստ միջոցների հաստատմանը կամ ներմուծմանը: Այդ միջոցները համապատասխանում են «Եվրոպական

միության գործունեության մասին» պայմանագրին: Հանձնաժողովը տեղեկացվում է այդ միջոցների մասին:

## Հոդված 2

### Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «շենք» նշանակում է տանիքածածկ շինություն, որն ունի պատեր, և որի համար էներգիան օգտագործվում է ներսի կլիմայի բարելավման համար.
2. «գրեթե զրոյական էներգասպառմամբ շենք» նշանակում է այն շենքը, որն ունի Հավելված I-ի համաձայն որոշված շատ բարձր էներգաարդյունավետություն: Պահանջվող գրեթե զրոյական կամ շատ քիչ քանակությամբ էներգիան շատ կարևոր է, որ ապահովվի վերականգնվող աղբյուրներից ստացված էներգիայի, ինչպես նաև տեղում կամ մոտակայքում արտադրված վերականգնվող աղբյուրների էներգիայի տեսքով.
3. «շենքի տեխնիկական համակարգ» նշանակում է շենքի կամ շինության ջեռուցման, հովացման, օդափոխման, տաք ջրի, լուսավորման տեխնիկական սարքավորում կամ դրանց համակցություն.
4. «շենքի էներգաարդյունավետություն» նշանակում է էներգիայի հաշվարկված կամ չափված քանակություն, որն անհրաժեշտ է շենքի տիպական կիրառման հետ կապված էներգիայի պահանջարկը բավարարելու համար, որը ներառում է, մասնավորապես, ջեռուցումը, հովացումը, օդափոխումը, տաք ջուրը և լուսավորումը.
5. «առաջնային էներգիա» նշանակում է վերականգնվող և չվերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա, որը չի ենթարկվել ցանկացած փոխակերպման կամ ձևափոխման.
6. «վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա» նշանակում է էներգիա, որը ստացվում է վերականգնվող ոչ հանածո աղբյուրներից, մասնավորապես, քամու, արեգակնային, օդաջերմային, կենսաջերմային կամ հիդրոջերմային և օվկիանոսային էներգիա, հիդրոէներգիա, կենսազանգվածից, աղբավայրերից արտանետվող գազ, կեղտաջրերի մաքրման կայանից ստացվող գազ և բիոգազեր.
7. «շենքի պատող կառուցվածքներ» նշանակում են շենքի համակցված տարրեր, որոնք առանձնացնում են շենքի ներսի մակերեսները դրսի միջավայրից.

8. «շինություն» նշանակում է շենքի հատված, հարկ կամ բնակարան, որը նախատեսված կամ փոփոխված է առանձնացված օգտագործման համար.

9. «կառուցվածքային տարր» նշանակում է շենքի տեխնիկական համակարգ կամ շենքի պատող կառուցվածքների որևէ տարր.

10. «հիմնական վերականգնում» նշանակում է շենքի վերականգնում, երբ՝

ա) շենքի պատող կառուցվածքների կամ շենքի տեխնիկական համակարգերի վերականգնման ընդհանուր ծախսը 25 %-ով ավել է շենքի արժեքից՝ բացառությամբ այն հողատարածքի արժեքը, որի վրա է տեղակայված շենքը կամ

բ) վերականգնման է ենթարկվում շենքի պատող կառուցվածքների մակերեսի ավելի քան 25%-ը:

Անդամ պետությունները կարող են իրենց ընտրությամբ կիրառել ա) կամ բ) տարբերակները.

11. «Եվրոպական ստանդարտ» նշանակում է Ստանդարտացման եվրոպական կոմիտեի, Էլեկտրատեխնիկական ստանդարտացման հարցերով եվրոպական կոմիտեի կամ Հեռահաղորդակցման ստանդարտների հարցերով եվրոպական ինստիտուտի կողմից ընդունված և հանրային օգտագործման համար մատչելի դարձված ստանդարտ.

12. «Էներգաարդյունավետության հավաստագիր» նշանակում է անդամ պետության կամ անդամ պետության կողմից նշանակված իրավաբանական անձի կողմից ճանաչված հավաստագիր, որում նշվում է շենքի կամ շինության էներգաարդյունավետության մասին՝ հաշվարկված 3-րդ հոդվածի համաձայն ընդունված մեթոդաբանությանը համապատասխան.

13. ա) «համակցված արտադրություն (կոգեներացիա)» նշանակում է մեկ պրոցեսով ջերմային էներգիայի և էլեկտրական և (կամ) մեխանիկական էներգիայի միաժամանակյա արտադրություն.

14. «Ծախսային օպտիմալության մակարդակ» նշանակում է էներգաարդյունավետության այն մակարդակը, որը հանգեցնում է ամենացածր ծախսի՝ տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածում, երբ՝

ա) ամենացածր ծախսը որոշվում է հաշվի առնելով էներգետիկ ներդրումների ծախսերը, պահպանման և շահագործման ծախսերը, հարկ եղած դեպքում (ներառյալ էներգիայի

ծախսերը և խնայողությունը, տվյալ շենքի տեսակը, արտադրված էներգիայից ստացված եկամուտները), հարկ եղած դեպքում՝ մնացորդների հեռացման ծախսերը և

բ) տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածը որոշվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից: Այն վերաբերում է շենքի տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի մնացյալ մասին, եթե էներգաարդյունավետության պահանջները սահմանված են ամբողջ շենքի համար կամ վերաբերում է կառուցվածքային տարրի տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածին, եթե էներգաարդյունավետության պահանջները սահմանված են կառուցվածքային տարրերի համար:

Ծախսային օպտիմալության մակարդակը պետք է դասվի արդյունավետության մակարդակների թվին, եթե տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի համար հաշվարկված ծախսերի և արդյունքների վերլուծության հանրագումարը դրական է.

15. «օդորակման համակարգ» նշանակում է ներսի օդի մշակման համար անհրաժեշտ բաղադրիչների համակցությունը, որով վերահսկվում կամ նվազեցվում է ջերմաստիճանը.

16. «կաթսա» նշանակում է կաթսայի մարմնի և այրիչի համակցված սարքվածք, որը նախատեսված է այրումից անջատված ջերմությունը հեղուկներին հաղորդելու համար.

17. «առավել նոմինալ հզորություն» նշանակում է կՎտ–ով արտահայտված առավելագույն ջերմարարություն, որը հատկորոշվում և դրա տրամադրումը արտադրողի կողմից երաշխավորվում է շարունակական գործարկման ընթացքում, այն դեպքում, երբ պահպանվեն արտադրողի կողմից նշված օգտակար հզորության ցուցանիշները.

18. «ջերմային պոմպ» նշանակում է սարք, մեխանիզմ կամ սարքավորում, որը բնական միջավայրի՝ օդի, ջրի կամ ընդերքի ջերմությունը փոխանցում է շենքերին կամ արդյունաբերական շինվածքներին՝ ջերմության բնական հոսքը փոխելով այնպես, որ այն հոսի ցածրից դեպի բարձր ջերմաստիճան: Ռևերսային ջերմային պոմպերը կարող են ջերմությունը փոխանցել շենքից՝ բնական միջավայր.

19. «կենտրոնացված ջեռուցում» կամ «կենտրոնացված հովացում» նշանակում է ջերմային էներգիայի բաշխում՝ գոլորշու, տաք ջրի կամ սառեցված հեղուկների տեսքով՝ դրանց արտադրման կենտրոնական աղբյուրից ցանցի միջոցով դեպի բազմաթիվ շենքեր կամ



տեղանքներ՝ դրանց ծավալները կամ դրանց հետ կապված պրոցեսը օգտագործելով ջեռուցման կամ հովացման նպատակներով:

### *Հոդված 3*

#### **Շենքերի էներգաարդյունավետության հաշվարկման մեթոդաբանության ընդունումը**

Անդամ պետությունները շենքերի էներգաարդյունավետության հաշվարկման մեթոդաբանությունը կիրառում են Հավելված I-ով սահմանված միասնական ընդհանուր համակարգի համաձայն:

Այդ մեթոդաբանությունն ընդունվում է ազգային կամ տարածքային մակարդակով:

### *Հոդված 4*

#### **Էներգաարդյունավետության նվազագույն պահանջների սահմանումը**

1. Անդամ պետությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում ապահովելու համար, որպեսզի շենքերի և շինությունների էներգաարդյունավետության նվազագույն պահանջները սահմանվեն ծախսային օպտիմալության մակարդակների հասնելու համար: Էներգաարդյունավետությունը հաշվարկվում է 3-րդ հոդվածում նշված մեթոդաբանության համաձայն: Ծախսային օպտիմալության մակարդակները հաշվարկվում են 5-րդ հոդվածում նշված համեմատական մեթոդաբանության համակարգի համաձայն՝ համակարգի պատրաստ լինելուն պես:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, ապահովելու համար որպեսզի պատող կառուցվածքների մաս հանդիսացող և դրանց էներգաարդյունավետության վրա էական ազդեցություն ունեցող կառուցվածքային տարրերի համար սահմանվեն էներգաարդյունավետության նվազագույն պահանջներ՝ վերջիններիս փոխարինման կամ արդիականացման դեպքում՝ ծախսային օպտիմալության մակարդակների հասնելու համար:

Պահանջներ սահմանելիս անդամ պետությունները կարող են տարբերակել նոր և գոյություն ունեցող շենքերը տարբեր տեսակի շենքերից:

Հնարավոր բացասական ազդեցություններից խուսափելու համար, ինչպիսին է օրինակ ոչ պատշաճ օդափոխումը, այդ պահանջները սահմանելիս հաշվի են առնվում դրսի ընդհանուր կլիմայական պայմանները, տեղային պայմանները, ինչպես նաև շենքի հնությունն ու դրա համար նախատեսված գործառույթը:

Անդամ պետությունից չի պահանջվում տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի համար սահմանել էներգաարդյունավետության այնպիսի նվազագույն պահանջներ, որոնք ծախսարդյունավետ չեն:

Էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերանայվում են կանոնավոր՝ հինգ տարին չգերազանցող ընդմիջումներով, և անհրաժեշտության դեպքում թարմացվում են շինարարության ոլորտում տեխնիկական առաջընթացի արտացոլման նպատակով:

2. Անդամ պետությունները կարող են որոշել չսահմանել կամ չկիրառել 1-ին պարբերության մեջ նշված պահանջները՝ հետևյալ տեսակի շինությունների նկատմամբ՝

ա) շենքեր, որոնք պաշտոնապես պահպանվում են հատուկ նշանակության գոտու մաս կազմելու և կամ ճարտարապետական կամ պատմական յուրահատուկ հատկանիշների համար, քանի որ էներգաարդյունավետության որոշ պահանջների պահպանումը անընդունելի կերպով կփոխի դրանց բնույթը կամ արտաքին տեսքը.

բ) որպես պաշտամունքի և կրոնական գործունեության համար նախատեսված վայր օգտագործվող շենքեր.

գ) օգտագործման երկու կամ պակաս տարով ժամանակավոր շենքեր, արդյունաբերական տարածքներ, արհեստանոցներ և սակավ էներգիայի պահանջարկով ոչ բնակելի գյուղատնտեսական նշանակության շենքեր, ինչպես նաև էներգաարդյունավետության մասին ազգային ոլորտային համաձայնագրով կարգավորվող ոլորտում գործածվող ոչ բնակելի գյուղատնտեսական նշանակության շենքեր.

դ) բնակելի շենքեր, որոնք օգտագործվում կամ նախատեսված են տարեկան չորս ամսից պակաս և կամ որպես այլընտրանքային տարբերակ՝ տարեկան սահմանափակ ժամանակով օգտագործման համար՝ շենքի ամբողջ տարվա օգտագործման արդյունքում սպառվող էներգիայի 25 %-ից պակաս ակնկալվող էներգասպառմամբ.

ե) 50 մ<sup>2</sup>-ից պակաս ընդհանուր օգտակար տարածք ունեցող շենքեր:

## Հոդված 5

### **Էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկումը**

1. Հանձնաժողովը, մինչ 2011 թվականի հունիսի 30-ը 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների համաձայն պատվիրակված ակտերի միջոցով շենքերի և կառուցվածքային տարրերի ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկման համար պետք է սահմանի համեմատական մեթոդաբանության համակարգ:

Համեմատական մեթոդաբանության համակարգը պետք է սահմանվի Հավելված III-ի համաձայն և դրանում պետք է տարբերակվեն նոր և գոյություն ունեցող շենքերը, ինչպես նաև շենքերի տարբեր տեսակները:

2. Անդամ պետությունները էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակները պետք է հաշվարկեն համեմատական մեթոդաբանության համակարգը կիրառելով, որը պետք է սահմանվի 1-ին պարբերության և համապատասխան պարամետրերի համաձայն, ինչպիսիք են կլիմայական պայմանները և էներգետիկ ենթակառուցվածքի պրակտիկ հասանելիությունը, և պետք է հաշվարկների արդյունքերը համեմատեն էներգաարդյունավետության գործող նվազագույն պահանջների հետ:

Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է հաշվետվություն ներկայացնեն այդ հաշվարկների համար օգտագործված ողջ մուտքագրված տվյալների և ենթադրությունների, ինչպես նաև այդ հաշվարկների արդյունքերի վերաբերյալ: Այդ հաշվետվությունը կարող է ներառվել 2006/32/ԵՀ հրահանգի 14(2) հոդվածում նշված էներգախնայողության գործողությունների ծրագրերում: Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է այդ հաշվետվությունները ներկայացնեն կանոնավոր՝ հինգ տարին չգերազանցող ընդմիջումներով: Առաջին հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչ 2012 թվականի հունիսի 30-ը:

3. Այն դեպքում, երբ 2-րդ պարբերության համաձայն կատարված համեմատության արդյունքը ցույց է տալիս, որ էներգաարդյունավետության գործող նվազագույն պահանջները էապես ավելի քիչ էներգախնայող են քան էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակները, ապա համապատասխան անդամ պետությունները Հանձնաժողովին ներկայացվելիք 2-րդ պարբերության մեջ նշված հաշվետվության մեջ պետք է գրավոր տեսքով հիմնավորեն այդ

տարբերությունը և կից ներկայացնեն բացը էապես նվազեցնելուն ուղղված համապատասխան քայլերը նկարագրող ծրագիր, ինչպես նաև այն բացը, որը չի կարող հիմնավորվել՝ մինչ 4(1) հոդվածում նշված էներգաարդյունավետության պահանջների հաջորդ վերանայումը:

4. Հանձնաժողովը պետք է հրապարակի էներգաարդյունավետության նվազագույն պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների հասնելու առումով անդամ պետությունների առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն:

### *Հոդված 6*

#### **Նոր շենքերը**

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որպեսզի նոր շենքերը համապատասխանեն 4-րդ հոդվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության նվազագույն պահանջներին:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի նոր շենքերի շինարարության մեկնարկից առաջ քննարկվեն և հաշվի առնվեն ներքոնշյալ բարձր արդյունավետության այլընտրանքային համակարգերի տեխնիկական, շրջակա միջավայրի պահպանության և տնտեսական իրագործելիությունը՝ վերջիններիս առկայության դեպքում՝

ա) վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի վրա հիմնված էներգամատակարարման ապակենտրոնացված համակարգեր.

բ) համակցված արտադրություն (կոգեներացիա).

գ) թաղամասային կամ շենքային մասշտաբով կենտրոնացված ջեռուցում կամ հովացում, մասնավորապես, երբ այն ամբողջապես կամ մասնակիորեն հիմնված է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի վրա.

դ) ջերմային պոմպեր:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի 1-ին պարբերության մեջ նշված այլընտրանքային համակարգերի վերլուծությունը փաստաթղթավորվի և մատչելի լինի ստուգման նպատակներով:

3. Այլընտրանքային համակարգերի այդ վերլուծությունը կարող է կատարվել առանձին շենքերի կամ համանման շենքերի խմբի և կամ միևնույն տարածքի ընդհանուր տիպային շենքերի համար: Եթե վերլուծությունը վերաբերում է կոլեկտիվ ջեռուցման և հովացման համակարգերին, ապա այն կարող է կատարվել համակարգին միացված միևնույն տարածքի բոլոր շենքերի համար:

### *Հոդված 7*

#### **Գոյություն ունեցող շենքերը**

Անդամ պետությունները շենքի հիմնական վերականգնման դեպքում պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որպեսզի, շենքի կամ շենքի վերականգնված հատվածի էներգաարդյունավետությունը բարձրացվի 4-րդ հոդվածի համաձայն սահմանված էներգաարդյունավետության նվազագույն պահանջներին համապատասխանելու համար՝ այնչափ, որչափ դա տեխնիկապես, ֆունկցիոնալ և տնտեսական առումներով իրագործելի է:

Այդ պահանջները պետք է կիրառվեն վերականգնված ամբողջ շենքի կամ շինության նկատմամբ: Պահանջները լրացուցիչ կամ այլընտրանքային կերպով կարող են կիրառվել վերականգնված կառուցվածքային տարրերի նկատմամբ:

Անդամ պետությունները լրացուցիչ կերպով պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար, որպեսզի շենքի պատող կառուցվածքների մաս կազմող և դրա էներգաարդյունավետության վրա զգալի ազդեցություն ունեցող կառուցվածքային տարրի արդիականացման կամ փոխարինման դեպքում, կառուցվածքային տարրի էներգաարդյունավետությունը համապատասխանի էներգաարդյունավետության նվազագույն պահանջներին՝ այնչափ, որչափ դա տեխնիկապես, ֆունկցիոնալ և տնտեսական առումներով իրագործելի է:

Անդամ պետությունները էներգաարդյունավետության այդ նվազագույն պահանջները պետք է որոշեն 4-րդ հոդվածի համաձայն:

Անդամ պետությունները պետք է խրախուսեն 6(1) հոդվածում նշված բարձր արդյունավետության այլընտրանքային համակարգերի դիտարկումը և հաշվի առնումը հիմնական վերականգնման ենթարկվող շենքերի առնչությամբ՝ այնչափ, որչափ դա տեխնիկապես, ֆունկցիոնալ և տնտեսական առումներով իրագործելի է:

### **Շենքի տեխնիկական համակարգերը**

1. Անդամ պետությունները շենքի տեխնիկական համակարգերի էներգիայի օգտագործումը օպտիմալացնելու նպատակով պետք է սահմանեն ընդհանուր էներգաարդյունավետության, պատշաճ տեղակայման, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերում տեղակայված շենքի տեխնիկական համակարգերի համապատասխան հզորության որոշման, հարմարեցման և վերահսկման համար պահանջներ: Անդամ պետությունները այս համակարգերի համար նախատեսված պահանջները կարող են կիրառել նաև նոր շենքերի նկատմամբ:

Համակարգերի համար նախատեսված պահանջները պետք է սահմանվեն նոր, փոխարինված և արդիականացված շենքի տեխնիկական համակարգերի համար և պետք է կիրառվեն՝ այնչափ, որչափ դրանք տեխնիկապես, տնտեսական և ֆունկցիոնալ առումներով իրագործելի են:

Համակարգերի համար նախատեսված պահանջները պետք է ներառեն առնվազն հետևյալը՝

ա) ջեռուցման համակարգեր.

բ) տաք ջրամատակարարման համակարգեր.

գ) օդորակման համակարգեր.

դ) ընդարձակ օդափոխման համակարգեր կամ

այդ համակարգերի համակցություն:

2. Անդամ պետությունները շենքի կառուցման կամ վերականգնման դեպքում պետք է աջակցեն գրագետ չափման համակարգի ներմուծմանը՝ միաժամանակ ապահովելով այդ աջակցության համապատասխանությունը Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգի Հավելված 1-ի 2-րդ կետի հետ [16]: Անդամ պետությունները կարող են նաև համապատասխան դեպքերում աջակցել ակտիվ վերահսկման համակարգերի տեղակայմանը, ինչպիսիք են ավտոմատացման, էներգիայի տնտեսման նպատակով վերահսկման և դիտանցման համակարգերը:

## Հոդված 9

### Գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի՝

ա) մինչ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը բոլոր նոր շենքերը լինեն գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքեր և

բ) 2018 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պետական մարմինների կողմից զբաղեցված կամ նրանց սեփականությունը հանդիսացող նոր շենքերը լինեն գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքեր:

Անդամ պետությունները պետք է կազմեն գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի թվի ավելացմանն ուղղված ազգային ծրագրեր: Այդ ազգային ծրագրերը կարող են ներառել շենքի տեսակին համապատասխան տարբերակված նպատակներ:

2. Անդամ պետությունները, հետևելով պետական սեկտորի առաջատար օրինակին, պետք է նաև մշակեն քաղաքականություն և ձեռնարկեն այնպիսի միջոցներ, ինչպիսին է, օրինակ, շենքերը գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի փոխակերպման խթանմանն ուղղված նպատակների սահմանումը, և Հանձնաժողովին տեղեկացնեն այդ մասին իրենց՝ 1-ին պարբերության մեջ նշված ազգային ծրագրերում:

3. Ազգային ծրագրերը պետք է ներառեն, մասնավորապես, հետևյալ տարրերը՝

ա) «գրեթե զրոյական էներգասպառմամբ շենք» սահմանման մանրամասն գործնականում կիրառում անդամ պետությունների կողմից, որում կարտացույցվեն վերջիններիս ազգային, տարածքային կամ տեղական պայմանները, ինչպես նաև այն կներառի առաջնային էներգիայի օգտագործման՝ տարեկան կտրվածքով կՎտ/ մ<sup>2</sup> արտահայտված թվային ցուցիչ: Առաջնային էներգիայի օգտագործման որոշման համար կիրառվող էներգետիկ գործոնները կարող են հիմնված լինել ազգային կամ տարածքային տարեկան կտրվածքով միջին արժեքների վրա և դրանցում կարող են հաշվի առնվել եվրոպական համապատասխան ստանդարտները.

բ) մինչ 2015 թվականը նոր շենքերի էներգաարդյունավետության բարելավման միջանկյալ նպատակներ՝ 1-ին պարբերության իրականացման նախապատրաստման նպատակով.

գ) քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև 1-ին և 2-րդ պարբերությունների համատեքստում գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի

խթանման նպատակով ընդունված ֆինանսական և այլ միջոցներ, այդ թվում նաև 2009/28/ԵՀ հրահանգի 13(4) հոդվածի և սույն Հրահանգի 6-րդ և 7-րդ հոդվածների համատեքստում վերականգնման ենթարկվող նոր և գոյություն ունեցող շենքերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման վերաբերյալ ազգային պահանջների և միջոցների մասին մանրամասներ:

4. Հանձնաժողովը պետք է գնահատի 1-ին պարբերության մեջ նշված ազգային ծրագրերը՝ մասնավորապես, սույն Հրահանգի նպատակներին անդամ պետությունների կողմից նախատեսված միջոցների համապատասխանության առումով: Հանձնաժողովը, պատշաճ կերպով հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը, կարող է պահանջել 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված պահանջների վերաբերյալ լրացուցիչ հատուկ տեղեկություններ: Այդ դեպքում համապատասխան անդամ պետությունները պետք է ներկայացնեն պահանջված տեղեկությունները կամ առաջարկեն փոփոխություններ՝ Հանձնաժողովի պահանջից հետո՝ ինը ամիսների ընթացքում: Հանձնաժողովը գնահատելուց հետո կարող է առաջարկություն ներկայացնել:

5. Հանձնաժողովը մինչ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը և այդուհետ՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, պետք է հրապարակի գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի թվի ավելացման առնչությամբ անդամ պետությունների ձեռքբերումների վերաբերյալ հաշվետվություն: Այդ հաշվետվության հիման վրա Հանձնաժողովը պետք է մշակի գործողությունների ծրագիր և անհրաժեշտության դեպքում միջոցներ առաջարկի այդ շենքերի թվի ավելացման համար և խրախուսի գոյություն ունեցող շենքերը գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի ծախսարդյունավետ փոխակերպման հետ կապված լավագույն գործելակերպը:

6. Անդամ պետությունները կարող են որոշել 1-ին պարբերության ա) և բ) կետերով սահմանված պահանջները չկիրառել հատուկ և հիմնավորված դեպքերում, երբ տվյալ շենքի տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի ծախսերի և արդյունքների վերլուծության արդյունքը բացասական է: Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին տեղեկացնեն համապատասխան օրենսդրական ռեժիմների սկզբունքների մասին:



**Ֆինանսական խրախուսական միջոցները և շուկայական խոչընդոտները**

1. Անդամ պետությունները, հաշվի առնելով համապատասխան ֆինանսավորման տրամադրման կարևորությունը և մյուս այն գործիքները, որոնք խրախուսում են շենքերի էներգաարդյունավետությունը և դրանց անցումը՝ գրեթե զրոյական էներգասպառմամբ շենքերի, անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկեն այդ գործիքներից ամենահամապատասխան ազգային հանգամանքների լույսի ներքո դիտարկելու ուղղությամբ:

2. Անդամ պետությունները մինչ 2011 թվականի հունիսի 31-ը պետք է կազմեն առկա և համապատասխան դեպքերում՝ առաջարկվող միջոցների և գործիքների ցանկ՝ այդ թվում նաև ֆինանսական բնույթի, որոնք չեն պահանջվում սույն Հրահանգով, սակայն օժանդակում են սույն Հրահանգի նպատակներին:

Անդամ պետություններն այդ ցանկը պետք է թարմացնեն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Անդամ պետություններն այդ ցանկը պետք է հաղորդեն Հանձնաժողովին, որը նրանք կարող են անել՝ այն ներառելով 2006/32/ԵՀ հրահանգի 14(2) հոդվածում նշված էներգախնայողության գործողությունների ծրագրերում:

3. Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի 2-րդ պարբերության մեջ նշված գոյություն ունեցող և առաջարկվող թվարկված միջոցները, ինչպես նաև Միության համապատասխան գործիքները՝ սույն Հրահանգի իրականացմանն աջակցելու մասով: Հիմնվելով այդ ուսումնասիրության վրա և պատշաճ կերպով հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը՝ Հանձնաժողովը կարող է տրամադրել խորհրդատվություն կամ առաջարկություններ հատուկ ազգային ծրագրերի և Միության, ինչպես նաև միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համաձայնեցված գործունեության վերաբերյալ: Հանձնաժողովը կարող է իր ուսումնասիրությունը և հնարավոր խորհրդատվությունն ու առաջարկությունները ներառել 2006/32/ԵՀ հրահանգի 14(5) հոդվածում նշված Ազգային էներգախնայողության ծրագրերի վերաբերյալ իր հաշվետվության մեջ:

4. Հանձնաժողովը համապատասխան՝ պահանջ ստանալու դեպքերում, պետք է օգնի անդամ պետություններին շենքերի և հատկապես գոյություն ունեցող շենքերի էներգախնայողության բարձրացման նպատակով կազմել ազգային կամ տարածքային ֆինանսական աջակցության ծրագրեր՝ օժանդակելով պետական կամ տարածքային

պատասխանատու գերատեսչությունների կամ մարմինների միջև լավագույն գործելակերպի փոխանակմանը:

5. Սույն Հրահանգի իրականացմանն օժանդակելու նպատակով ֆինանսավորում ավելացնելու համար, և սուբսիդիարության սկզբունքը պատշաճ կերպով հաշվի առնելով՝ Հանձնաժողովը պետք է, գերադասելի է մինչ 2011 թվականը, ներկայացնի, մասնավորապես, հետևյալի մասին վերլուծություն՝

ա) հատկապես բնակարանային շինարարության ոլորտում շենքերի էներգախնայողության բարձրացման համար կառուցվածքային հիմնադրամներից և շրջանակային ծրագրերով հատկացված միջոցների արդյունավետություն, համապատասխանության մակարդակ և օգտագործված իրական գումարի չափ.

բ) Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և այլ պետական ֆինանսական հաստատություններից ստացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետություն.

գ) Միության և պետական ֆինանսավորման և օժանդակության այլ ձևերի համակարգում, որը կարող է էներգախնայողության նպատակով ներդրումների խթանման համար պետական կարգավորման լծակների համակարգ հանդիսանալ, ինչպես նաև Միության նպատակներին հասնելու առումով այդ ֆինանսական միջոցների համապատասխանություն:

Այդ վերլուծության հիման վրա և բազմամյա ֆինանսական համակարգի համաձայն՝ Հանձնաժողովը, հարմար համարելու դեպքում, Եվրոպական պառլամենտին և Խորհրդին կարող է այնուհետև առաջարկություններ ներկայացնել Միության գործիքների վերաբերյալ:

6. Անդամ պետությունները շենքերի հիմնական վերականգնման կամ կառուցման համար խրախուսական միջոցներ տրամադրելիս պետք է հաշվի առնեն էներգաարդյունավետության ծախսային օպտիմալության մակարդակները:

7. Սույն Հրահանգի դրույթները չպետք է խոչընդոտեն անդամ պետություններին խրախուսական միջոցներ տրամադրել այն նոր շենքերի, վերականգնողական աշխատանքների կամ կառուցվածքային տարրերի համար, որոնք գերազանցում են ծախսային օպտիմալության մակարդակների սահմանաչափը:

**Էներգաարդյունավետության հավաստագրերը**

1. Անդամ պետությունները պետք է սահմանեն շենքերի էներգաարդյունավետության հավաստագրման համակարգի հիմնադրմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ: Էներգաարդյունավետության հավաստագիրը պետք է ներառի շենքի էներգաարդյունավետության մասին տեղեկություններ և բազային (հղումային) արժեքներ՝ ինչպիսիք են էներգաարդյունավետության պահանջները, որոնք շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ վարձակալին հնարավորություն կտան համեմատել և գնահատել դրանց էներգաարդյունավետությունը:

Էներգաարդյունավետության հավաստագիրը կարող է ներառել հավելյալ տեղեկություններ, ինչպիսիք են ոչ բնակելի շենքերի դեպքում՝ տարեկան էներգասպառումը և ընդհանուր էներգասպառման հարաբերությամբ՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի տոկոսային չափաբաժինը:

2. Էներգաարդյունավետության հավաստագիրը պետք է ներառի շենքերի կամ շինությունների էներգաարդյունավետությունը ծախսային տեսանկյունից օպտիմալ և ծախսարդյունավետ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ, բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը խելամիտ չէ:

Էներգաարդյունավետության հավաստագրի մեջ ներառված առաջարկությունները պետք է վերաբերեն՝

ա) շենքի պատող կառուցվածքների կամ շենքի տեխնիկական համակարգ(երի) հիմնական վերականգնման հետ կապված ձեռնարկվող միջոցներին և

բ) առանձին կառուցվածքային տարրերի համար նախատեսված միջոցներին՝ անկախ շենքի պատող կառուցվածքների կամ շենքի տեխնիկական համակարգ(երի) հիմնական վերականգնման հանգամանքից:

3. Էներգաարդյունավետության հավաստագրի մեջ ներառված առաջարկությունները պետք է տեխնիկապես իրագործելի լինեն որոշակի շենքերի համար, ինչպես նաև դրանցում կարող են են ներկայացվել շենքի տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի կտրվածքով ծախսերի ծածկման ժամկետների կամ ծախսերի և արդյունքների վերաբերյալ նախահաշիվ:

4. Էներգաարդյունավետության հավաստագրի մեջ պետք է նշված լինի թե որտեղից կարող է սեփականատերը կամ վարձակալը ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ՝ այդ թվում նաև էներգաարդյունավետության հավաստագրի մեջ ներկայացված առաջարկությունների ծախսարդյունավետության վերաբերյալ: Ծախսարդյունավետության գնահատումը պետք է հիմնված լինի մի շարք ստանդարտ պայմանների վրա, ինչպիսիք են էներգատնտեսումների արժեքի որոշումը, էներգիայի գործող գները և ծախսերի նախնական կանխատեսումը: Ի լրումն այդ ամենի, հավաստագիրը պետք է պարունակի տեղեկատվություն առաջարկությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ: Սեփականատիրոջը կամ վարձակալին կարող է տրամադրվել նաև նման թեմաներով այլ տեղեկատվություն, ինչպես օրինակ էներգաուղիտի, ֆինանսական կամ այլ բնույթի խրախուսական միջոցների, ֆինանսավորման հնարավորությունների մասին:

5. Ազգային կանոնների համաձայն անդամ պետությունները պետք է խրախուսեն պետական մարմիններին հաշվի առնել շենքերի էներգաարդյունավետության ոլորտում այն գլխավոր դերակատարումը, որ նրանք պետք է ունենան՝ մասնավորապես, իրականացնելով իրենց սեփականությունը հանդիսացող շենքերի համար նախատեսված և էներգաարդյունավետության հավաստագրում ներառված առաջարկությունները՝ հավաստագրի վավերականության ժամանակահատվածում:

6. Շինությունների հավաստագրումը կարող է հիմնվել՝

ա) ամբողջ շենքի ընդհանուր հավաստագրման կամ

բ) միևնույն շենքի մեկ այլ նմանատիպ և էներգետիկ նույն առանձնահատկություններն ունեցող շինության գնահատման վրա:

7. Մեկ ընտանիքի համար նախատեսված տների հավաստագրումը կարող է հիմնվել մեկ այլ՝ համանման կառուցվածքով և չափի, ինչպես նաև փաստացի համարժեք էներգաարդյունավետությամբ նմանատիպ շենքի գնահատման վրա, եթե այդօրինակ համապատասխանությունը կարող է երաշխավորվել էներգաարդյունավետության հավաստագրի շնորհող փորձագետի կողմից:

8. Էներգաարդյունավետության հավաստագրի վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին:

9. Հանձնաժողովը, մինչ 2011 թվականը, համապատասխան ոլորտների ներկայացուցիչների հետ խորհրդակցելուց հետո, ոչ բնակելի շենքերի համար պետք է ընդունի կամավոր ընդհանուր հավաստագրման Եվրոպական միության համակարգ: Այդ միջոցը պետք է ընդունվի 26(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն: Անդամ պետություններին պետք է խրախուսել ճանաչել կամ օգտվել այդ համակարգից, կամ դրա մի մասից՝ այն հարմարեցնելով ազգային հանգամանքներին:

## Հոդված 12

### Էներգաարդյունավետության հավաստագրերի տրամադրումը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի էներգաարդյունավետության հավաստագիրը տրամադրվի՝

ա) շենքերի կամ շինությունների համար, որոնք վաճառվել կամ վարձով են տրվել նոր վարձակալին և կամ կառուցվել են նրա համար.

բ) հասարակության կողմից հաճախ այցելվող շենքերի համար, որոնց ընդհանուր օգտակար տարածքի ավելի քան 500 մ<sup>2</sup>-ը զբաղեցված է պետական մարմնի կողմից: 2015 թվականի հուլիս 9-ին այս 500 մ<sup>2</sup> շենքը պետք է նվազեցվի մինչև 250 մ<sup>2</sup>:

Էներգաարդյունավետության հավաստագիր տրամադրելու պահանջը չի կիրառվում 2002/91/ԵՀ հրահանգի և կամ սույն Հրահանգի համաձայն համապատասխան շենքին կամ շինությանը տրամադրված հավաստագրի առկայության և վավեր լինելու դեպքում:

2. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որպեսզի շենքերի կամ շինությունների կառուցման, վաճառքի կամ վարձակալության դեպքում էներգաարդյունավետության հավաստագիրը և կամ դրա օրինակը ցույց տրվի կամ փոխանցվի հավանական նոր վարձակալին կամ գնորդին:

3. Այն դեպքում, երբ շենքը վաճառվել կամ վարձակալության է հանձնվել նախքան դրա կառուցումը, ապա շեղվելով 1-ին և 2-րդ պարբերություններից՝ անդամ պետությունները կարող են վաճառողից պահանջել, որպեսզի նա տրամադրի շենքի ապագայում ակնկալվող էներգաարդյունավետության գնահատում. այս դեպքում էներգաարդյունավետության հավաստագիրը պետք է տրամադրվի ամենաուշը շենքի կառուցման ավարտին:

4. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որպեսզի այն դեպքում, երբ՝

-էներգաարդյունավետության հավաստագիր ունեցող շենքերը,

-էներգաարդյունավետության հավաստագիր ունեցող և շենքի ներսում գտնվող շինությունները և

-էներգաարդյունավետության հավաստագիր ունեցող շինությունները

առաջարկվեն վաճառքի կամ վարձակալության համար, շենքի կամ շինության էներգաարդյունավետության հավաստագրի էներգաարդյունավետության ցուցիչը, համապատասխան դեպքերում, հիշատակվի կոմերցիոն լրատվամիջոցներով տրվող գովազդային հայտարարություններում:

5. Սույն հոդվածի դրույթները պետք է կիրառվեն համատեղ սեփականության կամ ընդհանուր գույքի վերաբերյալ ազգային կիրառելի կանոնների համաձայն:

6. Անդամ պետությունները 4(2) հոդվածում նշված շենքերի տեսակների համար պետք է բացառեն սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ պարբերությունների կիրառումը:

7. Էներգաարդյունավետության հավաստագրերի հետ կապված հնարավոր հետևանքների մասով դատական վարույթները , եթե այդպիսիք կլինեն, պետք է լուծվեն ազգային կանոնների համաձայն:

### *Հոդված 13*

#### **Էներգաարդյունավետության հավաստագրերի ցուցադրումը**

1. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ապահովելու համար, որպեսզի 12(1) հոդվածի համաձայն 500 մ<sup>2</sup> –ից ավելի ընդհանուր օգտակար տարածք ունեցող, պետական մարմինների կողմից զբաղեցված և հասարակության կողմից հաճախակի այցելվող շենքի համար տրամադրված էներգաարդյունավետության հավաստագիրը ցուցադրվի նկատելի և հասարակության համար հստակ տեսանելի վայրում:

2015 թվականի հուլիս 9–ին այս 500 մ<sup>2</sup> շենքը պետք է նվազեցվի մինչև 250 մ<sup>2</sup>:

2. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որպեսզի 12(1) հոդվածի համաձայն 500 m<sup>2</sup> –ից ավելի ընդհանուր օգտակար տարածք ունեցող և հասարակության կողմից հաճախակի այցելվող շենքի համար տրամադրված էներգաարդյունավետության հավաստագիրը ցուցադրվի նկատելի և հասարակության համար հստակ տեսանելի վայրում:

3. Սույն հոդվածի դրույթները չեն ներառում էներգաարդյունավետության հավաստագրի մեջ ընդգրկված առաջարկությունները ցուցադրելու պարտավորություն:

#### Հոդված 14

### **Ջեռուցման համակարգերի ստուգումը**

1. Անդամ պետությունները պետք է սահմանեն միջոցներ շենքերի ջեռուցման համակարգերի հասանելի այնպիսի հատվածների կանոնավոր ստուգման կազմակերպման ուղղությամբ, ինչպիսիք են ջերմային գեներատորը, վերահսկման համակարգը և շրջանառու պոմպ(երը), որոնք տարածքը ջեռուցելու նպատակով ունեն 20 կՎտ–ից ավել առավել նոմինալ հզորությամբ կաթսաներ: Այդ ստուգումը պետք է ներառի ինչպես կաթսայի օգտակար գործողության գործակցի, այնպես էլ դրա չափերի գնահատում՝ շենքի ջեռուցման պահանջների համեմատությամբ: Կաթսայի չափերի գնահատումը չպետք է կրկնել, քանի դեռ ջեռուցման համակարգի կամ շենքի ջեռուցման պահանջների հետ կապված որևէ փոփոխություն չի կատարվել այդ ընթացքում:

Անդամ պետությունները էլեկտրոնային դիտանցման և վերահսկման համակարգի պատրաստ լինելու դեպքում կարող են նվազեցնել այդ ստուգումների հաճախականությունը կամ համապատասխան ձևով պարզեցնել դրանք:

2. Անդամ պետությունները, կախված ջեռուցման համակարգի տեսակից և դրա առավել նոմինալ հզորությունից կարող են սահմանել ստուգման տարբեր հաճախականություն՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ջեռուցման համակարգերի ստուգման ծախսատարությունը և այդ ստուգման հետևանքով էներգիայի ծախսի տնտեսման գնահատված չափը:

3. 100 կՎտ–ից ավել առավել նոմինալ հզորությամբ կաթսաներով ջեռուցման համակարգերը պետք է ստուգվեն նվազագույնը ամեն երկու տարին մեկ անգամ:

Գազի կաթսաների համար այդ ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև չորս տարի:

4. Որպես 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների այլընտրանքային տարբերակ անդամ պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել կաթսայի փոխարինման, ջեռուցման համակարգի ձևափոխումների, ինչպես նաև կաթսայի օգտակար գործողության գործակցի

և համապատասխան չափերի գնահատման այլընտրանքային լուծումների վերաբերյալ օգտագործողներին խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ: Սույն մոտեցման հետևանքներն ամբողջապես պետք է համարժեք լինի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված դրույթներից բխող հետևանքներին:

Այն դեպքում, երբ անդամ պետություններն իրենց ընտրությամբ կիրառում են առաջին ենթապարբերության մեջ նշված միջոցները, ապա այդ միջոցների հետ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված միջոցների համարժեքության վերաբերյալ հաշվետվություն պետք է ներկայացնեն Հանձնաժողովին ամենաուշը մինչ 2011 թվականի հունիսի 30-ը: Անդամ պետություններն այդ հաշվետվությունները պետք ներկայացնեն Հանձնաժողովին յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Այդ հաշվետվությունները կարող են ներառվել 2006/32/ԵՀ հրահանգի 14(2) հոդվածում նշված էներգախնայողության գործողությունների ծրագրերում:

5. Հանձնաժողովը 4-րդ պարբերության մեջ նկարագրված տարբերակի կիրառման վերաբերյալ Անդամ պետության կողմից ազգային հաշվետվություն ստանալուց հետո կարող է պահանջել լրացուցիչ հատուկ տեղեկություններ այդ պարբերությամբ սահմանված միջոցների համարժեքության և պահանջների վերաբերյալ: Այդ դեպքում համապատասխան անդամ պետությունը ինը ամսվա ընթացում պետք է ներկայացնի պահանջված տեղեկությունները կամ պետք է առաջարկի փոփոխություններ:

#### *Հոդված 15*

### **Օդորակման համակարգերի ստուգումը**

1. Անդամ պետությունները պետք է սահմանեն անհրաժեշտ միջոցներ 12 կՎտ-ից ավել առավել նոմինալ հզորությամբ օդորակման համակարգերի հասանելի հատվածների կանոնավոր ստուգման կազմակերպման ուղղությամբ: Այդ ստուգումը պետք է ներառի ինչպես օդորակման համակարգի օգտակար գործողության գործակցի, այնպես էլ դրա չափերի գնահատում՝ շենքի հովացման պահանջների համեմատությամբ: Օդորակման համակարգի չափերի գնահատումը չպետք է կրկնել, քանի դեռ օդորակման համակարգի կամ շենքի հովացման պահանջների հետ կապված որևէ փոփոխություն չի կատարվել այդ ընթացքում:



Անդամ պետությունները էլեկտրոնային դիտանցման և վերահսկման համակարգի պատրաստ լինելու դեպքում կարող են նվազեցնել այդ ստուգումների հաճախականությունը կամ համապատասխան ձևով պարզեցնել դրանք:

2. Անդամ պետությունները, կախված օդորակման համակարգի տեսակից և դրա առավել նոմինալ հզորությունից կարող են սահմանել ստուգման տարբեր հաճախականություն՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով օդորակման համակարգերի ստուգման ծախսատարությունը և այդ ստուգման հետևանքով էներգիայի ծախսի տնտեսման գնահատված չափը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված միջոցները սահմանելիս անդամ պետությունները այնքանով, որքանով դա տնտեսապես և տեխնիկապես իրագործելի է, պետք է ապահովեն, որպեսզի ստուգումներն անցկացվեն սույն Հրահանգի 14-րդ հոդվածում նշված ջեռուցման և այլ տեխնիկական համակարգերի, ինչպես նաև Ֆտորացված ջերմոցային որոշ գազերի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 842/2006 կանոնակարգում (ԵՀ) [17] նշված արտահոսքերի ստուգման կարգին համապատասխան:

4. Որպես 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների այլընտրանքային տարբերակ անդամ պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել օդորակման համակարգերի փոխարինման, օդորակման համակարգերի ձևափոխումների և հնարավոր է նաև օդորակման համակարգի օգտակար գործողության գործակցի և համապատասխան չափերի գնահատման նպատակով ստուգումների վերաբերյալ օգտագործողներին խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ: Սույն մոտեցման հետևանքներն ամբողջապես պետք է համարժեք լինի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված դրույթներից բխող հետևանքներին:

Այն դեպքում, երբ անդամ պետությունները կիրառում են առաջին ենթապարբերության մեջ նշված միջոցները, ապա այդ միջոցների հետ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված միջոցների համարժեքության վերաբերյալ հաշվետվություն պետք է ներկայացնեն Հանձնաժողովին՝ ամենաուշը մինչ 2011 թվականի հունիսի 30-ը: Անդամ պետությունները այդ հաշվետվությունները պետք ներկայացնեն Հանձնաժողովին յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Այդ հաշվետվությունները կարող են ներառվել 2006/32/ԵՀ հրահանգի 14(2) հոդվածում նշված էներգախնայողության գործողությունների ծրագրերում:

5. Հանձնաժողովը 4-րդ պարբերության մեջ նկարագրված տարբերակի կիրառման վերաբերյալ Անդամ պետության կողմից ազգային հաշվետվություն ստանալուց հետո կարող է պահանջել լրացուցիչ հատուկ տեղեկություններ այդ պարբերությամբ սահմանված միջոցների համարժեքության և պահանջների վերաբերյալ: Այդ դեպքում համապատասխան անդամ պետությունը ինը ամսվա ընթացքում պետք է ներկայացնի պահանջված տեղեկությունները կամ պետք է առաջարկի փոփոխություններ:

#### *Հոդված 16*

#### **Ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգման մասին հաշվետվությունները**

1. Ջեռուցման կամ օդորակման համակարգերի յուրաքանչյուր ստուգումից հետո պետք է ներկայացվի ստուգման մասին հաշվետվություն: Ստուգման մասին հաշվետվությունը պետք է պարունակի 14-րդ կամ 15-րդ հոդվածների համաձայն կատարած ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև պետք է ներառի ստուգված համակարգի էներգաարդյունավետության ծախսարդյունավետ բարելավման վերաբերյալ առաջարկություններ:

Առաջարկությունները կարող են հիմնված լինել ստուգում անցած համակարգի, առկա լավագույն իրագործելի համակարգի, ինչպես նաև միևնույն տեսակի այնպիսի համակարգի էներգաարդյունավետության համեմատության վրա, որի բոլոր համապատասխան բաղադրիչներն ունեն կիրառվող օրենսդրությամբ պահանջվող էներգաարդյունավետության մակարդակ:

2. Ստուգման մասին հաշվետվությունը պետք է փոխանցվի շենքի սեփականատիրոջը կամ վարձակալին:

#### *Հոդված 17*

#### **Անկախ փորձագետները**

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի շենքերի էներգաարդյունավետության հավաստագրումը, ինչպես նաև ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգումները կատարվեն անկախ եղանակով՝ որակավորված և/կամ հավատարմագրված փորձագետների կողմից՝ անկախ նրանց ինքնազբաղ լինելու,

պետական մարմինների մոտ և կամ մասնավոր ձեռնարկություններում աշխատելու հանգամանքից:

Փորձագետներին հավատարմագրելիս պետք է հաշվի առնվի նրանց որակավորումը:

Անդամ պետությունները հասարակության համար մատչելի պետք է դարձնեն վերապատրաստման և հավաստագրման վերաբերյալ տեղեկատվությունը: Անդամ պետությունները պետք է նաև ապահովեն որակավորված և/կամ հավատարմագրված փորձագետների կամ էլ այդ փորձագետների ծառայությունն առաջարկող ընկերությունների պարբերաբար թարմացվող ցանկերի հասարակության համար մատչելիությունը:

### *Հոդված 18*

#### **Անկախ վերահսկման համակարգ**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի էներգաարդյունավետության հավաստագրման, ինչպես նաև ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգումների մասին հաշվետվությունների անկախ վերահսկման համակարգը սահմանվի հավելված II-ի համաձայն: Անդամ պետությունները էներգաարդյունավետության հավաստագրումը, ինչպես նաև ջեռուցման և օդորակման համակարգերի ստուգումների մասին հաշվետվությունները վերահսկելու համար կարող են սահմանել առանձին համակարգեր:

2. Անդամ պետությունները կարող են պատվիրակել անկախ վերահսկման համակարգերը գործարկելու պարտավորությունները:

Այն դեպքում, երբ անդամ պետությունները որոշում են այդպես վարվել, պետք է ապահովեն, որպեսզի անկախ վերահսկման համակարգերը գործարկվեն՝ հավելված II-ին համապատասխան:

3. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որպեսզի 1-ին պարբերության մեջ նշված էներգաարդյունավետության հավաստագրերը և ստուգումների մասին հաշվետվությունները մատչելի դարձվեն իրավասու գերատեսչությունների կամ մարմինների համար՝ վերջիններիս պահանջի դեպքում:

## Հոդված 19

### Վերանայումը

Հանձնաժողովը, 26-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի աջակցությամբ, սույն Հրահանգը պետք է գնահատի դրա կիրառման ընթացքում ձեռք բերված փորձի և ձեռքբերումների լույսի ներքո՝ ամենաուշը մինչ 2017 թվականի հունվարի 1-ը և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնի:

## Հոդված 20

### Տեղեկատվությունը

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն շենքերի կամ շինությունների սեփականատերերին կամ վարձակալներին էներգաարդյունավետության բարձրացմանը ծառայող տարբեր մեթոդների և գործընթացների մասին տեղեկացնելու ուղղությամբ:

2. Անդամ պետությունները, մասնավորապես, պետք է շենքերի սեփականատերերին կամ վարձակալներին տեղեկատվություն տրամադրեն էներգաարդյունավետության հավաստագրերի և ստուգումների մասին հաշվետվությունների, դրանց նպատակների և խնդիրների, շենքի էներգաարդյունավետության բարելավման ծախսարդյունավետ եղանակների և անհրաժեշտության դեպքում՝ շենքի էներգաարդյունավետության բարելավման նպատակով տրամադրվող ֆինանսական գործիքների վերաբերյալ:

Անդամ պետությունների պահանջի դեպքում Հանձնաժողովը պետք է աջակցի անդամ պետություններին կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներն 1-ին պարբերության և սույն պարբերության առաջին ենթապարբերության նպատակներով, որոնք կարող են դիտարկվել Միության ծրագրերում:

3. Անդամ պետությունները սույն Հրահանգի կիրարկման պատասխանատուների համար պետք է ապահովեն ուղղորդման և վերապատրաստման գործընթացների մատչելիությունը: Այդ խորհրդատվությունը և վերապատրաստումը պետք է վերաբերի էներգաարդյունավետության բարելավման կարևորությանը և պետք է հնարավոր դարձնի էներգախնայողության բարելավումների, վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման և կենտրոնացված ջեռուցման և հովացման համակարգերի

օպտիմալ համակցության դիտարկումը՝ արդյունաբերական կամ բնակելի տարածքների պլանավորման, նախագծման, կառուցման և վերականգնման ժամանակ:

4. Հանձնաժողովին առաջարկվում է շարունակաբար կատարելագործել իր տեղեկատվական ծառայությունները, մասնավորապես կայքէջը, որը ստեղծվել է որպես շենքերի էներգախնայողության վերաբերյալ Եվրոպական պորտալ՝ նախատեսված քաղաքացիների, մասնագետների, իշխանությունների համար՝ անդամ պետությունների իրազեկության բարձրացման և տեղեկատվական գործընթացներին աջակցելու նպատակով: Այդ կայքէջում ներկայացված տեղեկատվությունը կարող է պարունակել հղումներ՝ Եվրոպական միության և ազգային տարածքային ու տեղական համապատասխան օրենսդրությանը, Ազգային էներգախնայողության գործողությունների ծրագրերը ներկայացնող Եվրոպական կայքէջերին, առկա ֆինանսական գործիքներին, ինչպես նաև ազգային, տարածքային և տեղական մակարդակով լավագույն գործելակերպի օրինակներին: Տարածքային զարգացման Եվրոպական հիմնադրամի համատեքստում Հանձնաժողովը պետք է առկա դրամական միջոցների կիրառումը հեշտացնելու նպատակով շարունակի հետազայում հզորացնել իր տեղեկատվական ծառայությունները՝ ֆինանսավորման հնարավորությունների հետ կապված աջակցություն և տեղեկատվություն տրամադրելով շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև ազգային, տարածքային և տեղական իշխանություններին՝ հաշվի առնելով կարգավորող շրջանակում կատարված վերջին փոփոխությունները:

#### *Հոդված 21*

#### **Խորհրդատվությունը**

Սույն Հրահանգի կիրարկումը հեշտացնելու նպատակով անդամ պետությունները պետք է խորհրդատվություն տրամադրեն ներգրավված շահագրգիռ կողմերին, այդ թվում նաև տեղական և տարածքային իշխանություններին՝ կիրառվող ազգային օրենսդրության համաձայն և համապատասխան դեպքերում: Այդ խորհրդատվությունն առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում 9-րդ և 20-րդ հոդվածների կիրառման համար:

## Հոդված 22

### **I Հավելվածի համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին**

Հանձնաժողովը I Հավելվածի 3-րդ և 4-րդ կետերը 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների համաձայն պատվիրակված ակտերի միջոցով պետք է համապատասխանեցնի տեխնիկական առաջընթացին:

## Հոդված 23

### **Պատվիրակման իրականացումը**

1. 22-րդ հոդվածում նշված պատվիրակված ակտեր ընդունելու լիազորությունները պետք է վերապահվեն Հանձնաժողովին՝ հինգ տարի ժամկետով՝ սկսած 2010 թվականի հուլիսի 6-ից: Լիազորությունների պատվիրակումը պետք է մեխանիկորեն երկարաձգվի նույնքան տևողությամբ, քանի դեռ Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը այն չեղյալ չեն համարել՝ 24-րդ հոդվածի համաձայն:
2. Չխախտելով 5(1) հոդվածում նշված վերջնաժամկետը՝ 5-րդ հոդվածում նշված պատվիրակված ակտեր ընդունելու լիազորությունները պետք է վերապահվեն Հանձնաժողովին՝ մինչև 2012 թվականի հունիսի 30-ը:
3. Պատվիրակված ակտ ընդունելուց անմիջապես հետո Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին և Խորհրդին միաժամանակ ծանուցի այդ մասին:
4. Պատվիրակված ակտ ընդունելու լիազորությունները վերապահվում են Հանձնաժողովին՝ 24-րդ և 25-րդ հոդվածներով սահմանված պայմանների համաձայն:

## Հոդված 24

### **Պատվիրակման չեղյալ հայտարարումը**

1. Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը կարող են չեղյալ հայտարարել 5-րդ և 22-րդ հոդվածներում նշված լիազորությունների պատվիրակումը:
2. Այն հաստատությունը, որը լիազորությունների պատվիրակումը չեղյալ հայտարարելու հետ կապված որոշումների ընդունման ներքին գործընթաց է սկսել, պետք է աշխատի նախքան վերջնական որոշում կայացնելը խելամիտ ժամկետներում այդ մասին տեղեկացնել

այլ հաստատությունների և Հանձնաժողովին՝ նշելով ամենայն հավանականությամբ չեղյալ հայտարարման ենթակա պատվիրակված լիազորությունները, ինչպես նաև դրա հնարավոր պատճառները:

3. Չեղյալ հայտարարման մասին որոշումը դադարեցնում է այդ որոշման մեջ նշված լիազորությունների պատվիրակումը: Այն ուժի մեջ է մտնում անմիջապես կամ դրանում նշված ավելի ուշ ժամկետում: Այն չի ազդում արդեն ուժի մեջ մտած պատվիրակված ակտերի վավերականության վրա: Այն հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

## *Հոդված 25*

### **Պատվիրակված ակտերի վերաբերյալ առարկությունները**

1. Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդը կարող են առարկություններ ներկայացնել պատվիրակված ակտերի վերաբերյալ ծանուցման ամսաթվին հաջորդող երկու ամսվա ընթացքում:

Եվրոպական պառլամենտի կամ Խորհրդի նախաձեռնությամբ՝ այդ ժամկետը երկարաձգվում է երկու ամսով:

2. Եթե այդ ժամկետի լրանալուն պես, ոչ՝ Եվրոպական պառլամենտը, ոչ՝ Խորհուրդը առարկություններ չեն ներկայացնում պատվիրակված ակտի վերաբերյալ, ապա այն հրապարակվում է Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում և ուժի մեջ է մտնում դրանում նշված օրը:

Պատվիրակված ակտը կարող է հրապարակվել Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում և ուժի մեջ մտնել մինչև այդ ժամկետի լրանալը, եթե թե՛ Եվրոպական պառլամենտը, թե՛ Խորհուրդը Հանձնաժողովին տեղեկացնում են առարկություններ չներկայացնելու իրենց մտադրության մասին:

Այն դեպքում, երբ Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդն առարկություն է ներկայացնում պատվիրակված ակտի վերաբերյալ, այն չի մտնում ուժի մեջ: Այն հաստատությունը, որը առարկություն է ներկայացնում պատվիրակված ակտի վերաբերյալ, նշում է դրա պատճառները:

## Հոդված 26

### Կոմիտեի ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Սույն պարբերությանը հղում կատարվելու դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

## Հոդված 27

### Պատժամիջոցները

Անդամ պետությունները պետք է սահմանեն սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային կանոնների խախտման դեպքերում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ և դրանց կիրառումն ապահովելու համար պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները: Նախատեսված պատիժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ: Անդամ պետությունները, ամենաուշը մինչ 2013 թվականի հունվարի 19-ը, Հանձնաժողովին պետք է հաղորդեն այդ դրույթների մասին և անհապաղ ծանուցեն այդ դրույթների վրա ազդող ցանկացած հետագա փոփոխության վերաբերյալ:

## Հոդված 28

### Փոխատեղումը

1. Անդամ պետությունները, ամենաուշը մինչ 2012 թվականի հուլիսի 9-ը, պետք է ընդունեն և հրապարակեն 2-րդից 18-րդ հոդվածների, ինչպես նաև 20-րդ և 27-րդ հոդվածների կատարման համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական ակտեր:

Նրանք այդ ակտերը պետք է կիրառեն սկսած ամենաուշը 2013 թվականի հունվարի 9-ից, այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է 2-րդ, 3-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ և 27-րդ հոդվածներին:

Նրանք այդ ակտերը պետք է կիրառեն պետական մարմինների կողմից զբաղեցված շենքերի նկատմամբ՝ սկսած ամենաուշը 2013 թվականի հունվարի 9-ից, իսկ այլ շենքերի նկատմամբ՝ սկսած ամենաուշը 2013 թվականի հուլիսի 9-ից, այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներին:



Նրանք կարող են մինչ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը հետաձգել 12(1) և (2) հոդվածի կիրառումը վարձակալության տրված առանձին շինությունների նկատմամբ: Սակայն դրա արդյունքում համապատասխան անդամ պետությունում չպետք է տրամադրվեն ավելի քիչ թվով հավաստագրեր, քան կարող էին տրամադրվել 2002/91/ԵՀ հրահանգի կիրառման դեպքում:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Դրանք պետք է նաև նշում ներառեն այն մասին, որ գործող օրենքներում, կանոնակարգերում և վարչական ակտերում 2002/91/ԵՀ հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ: Անդամ պետությունները պետք է որոշեն նման հղում անելու և նշումը ձևակերպելու ձևը:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 29

### **Ուժը կորցրած ճանաչելը**

IV հավելվածի Ա մասում նշված Կանոնակարգով փոփոխված 2002/91/ԵՀ հրահանգը սույնով ուժը կորցրած է ճանաչվում 2012 թվականի փետրվարի 1-ից՝ չհակասելով IV հավելվածի Բ մասով սահմանված՝ Հրահանգն ազգային իրավունքում փոխատեղելու և այն կիրառելու ժամկետի վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Թիվ 2002/91/ԵՀ հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և պետք է ընթերցվեն V հավելվածով սահմանված համեմատական աղյուսակի համաձայն:

Հոդված 30

### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

### Հոդված 31

#### Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2010 թվականի մայիսի 19-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Ժ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Դ. Լոպեզ Գարրիդո

[1] ՊՏ թիվ C 277, 17.11.09, էջ 75:

[2] ՊՏ թիվ C 200, 25.08.09, էջ 41:

[3] Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 23-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել), Խորհրդի 2010 թվականի ապրիլի 14-ի դիրքորոշում առաջին ընթերցման ժամանակ (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Եվրոպական պառլամենտի 2010 թվականի մայիսի 18-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[4] ՊՏ թիվ L 1, 04.01.2003թ., էջ 65:

[5] Տե՛ս Հավելված IV, Մաս Ա:

[6] ՊՏ թիվ L 140, 05.06.2009թ., էջ 136:

[7] ՊՏ թիվ L 140, 05.06.2009թ., էջ 16:

[8] ՊՏ թիվ L 285, 31.10.2009թ., էջ 10:

[9] Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

- [10] ՊՏ թիվ L 210, 31.07.2006թ., էջ 1:
- [11] ՊՏ թիվ L 116, 09.05.2009թ., էջ 18:
- [12] ՊՏ թիվ L 114, 27.04.2006թ., էջ 64:
- [13] ՊՏ թիվ L 255, 30.09.2005թ., էջ 22:
- [14] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:
- [15] ՊՏ թիվ C 321, 31.12.2003, էջ 1:
- [16] ՊՏ թիվ L 211, 14.08.2009թ., էջ 55:
- [17] ՊՏ թիվ L 161, 14.06.2006թ., էջ 1:

**Շենքերի էներգաարդյունավետության հաշվարկման միասնական ընդհանուր  
համակարգը**

**(3-րդ հոդվածում նշված)**

1. Շենքի տիպական կիրառման հետ կապված տարբեր կարիքները բավարարելու համար էներգաարդյունավետությունը պետք է որոշվի տարեկան հաշվարկված կամ փաստացի էներգասպառման հիման վրա և պետք է արտացոլի շենքի համար նախատեսված ջերմաստիճանային պայմանների պահպանման նպատակով ջեռուցման և հովացման համար անհրաժեշտ էներգիայի կարիքները (գերտաքացումից խուսափելու համար անհրաժեշտ էներգիա), ինչպես նաև կենցաղային կարիքների բավարարման համար անհրաժեշտ տաք ջրի կարիքները:

2. Շենքի էներգաարդյունավետությունը պետք է արտահայտված լինի թափանցիկ կերպով և պետք է ներառի էներգաարդյունավետության ցուցիչ և առաջնային էներգիայի օգտագործման թվային ցուցիչ՝ հիմնված առանձին էներգակիրների առաջնային էներգիայի օգտագործման գործոնների վրա, որոնք կարող են հիմնված լինել ազգային կամ տարածքային տարեկան կտրվածքով գնահատված միջին ցուցիչների կամ տեղում արտադրության հատուկ արժեքի վրա:

Շենքերի էներգաարդյունավետության հաշվարկման մեթոդաբանության մեջ պետք է հաշվի առնվեն եվրոպական ստանդարտները, ինչպես նաև այն պետք է համապատասխանի Միության համապատասխան օրենսդրությանն ու այդ թվում՝ 2009/28/ԵՀ հրահանգին:

3. Մեթոդաբանությունը սահմանելիս պետք է հաշվի առնվեն առնվազն հետևյալ ասպեկտները՝

ա) շենքի, ինչպես նաև դրա ներքին միջնորմերի հետևյալ փաստացի ջերմային առանձնահատկությունները՝

i) ջերմակայունություն,

ii) մեկուսացում,

iii) պասսիվ ջեռուցում,

iv) հովացման տարրեր և

v) ջերմային կամուրջներ,

բ) ջեռուցման սարքավորում և տաք ջրամատակարարում՝ ներառյալ դրանց ջերմամեկուսացման առանձնահատկությունները.

գ) օդորակման սարքավորումներ.

դ) բնական ճանապարհով և մեխանիկական օդափոխություն, հնարավոր է նաև հերմետիկություն.

ե) ներկառուցված լուսավորման սարքավորում (հիմնականում ոչ բնակելի հատվածի).

զ) շենքի կառուցվածքը, դիրքը և կողմնորոշումը՝ ներառյալ դրսի կլիման,

է) պասսիվ արևային համակարգեր և արևապաշտպան համակարգեր.

ը) ներսի կլիմայական պայմանները, այդ թվում՝ նախագծով նախատեսված. ը) ներքին բեռնվածություն:

4. Հետևյալ ասպեկտների դրական ազդեցությունը համապատասխան դեպքերում պետք է հաշվի առնվի հաշվարկի մեջ՝

ա) արևի ճառագայթման (ինսուլյացիա) լրկալ պայմաններ, ակտիվ արևային համակարգեր, ինչպես նաև այլ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համակարգեր՝ հիմնված վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի վրա.

բ) համակցված արտադրության (կոգեներացիա) արդյունքում արտադրված էլեկտրաէներգիա.

գ) թաղամասային կամ շենքային մասշտաբով կենտրոնացված ջեռուման և հովացման համակարգեր.

դ) բնական լուսավորություն:

5. Հաշվարկներ կատարելու նպատակով շենքերը պետք է համապատասխանաբար դասակարգվեն հետևյալ կատեգորիաներում՝

ա) մեկ ընտանիքի համար նախատեսված կամ այլ տեսակի տներ.

բ) բազմաբնակարանային շենքեր.

գ) գրասենյակներ.

դ) ուսումնական շենքեր.

ե) հիվանդանոցներ.

զ) հյուրանոցներ և ռեստորաններ.

է) սպորտային կառույցներ.

ը) մեծածախ և մանրածախ առևտրային ծառայությունների համար նախատեսված շենքեր.

թ) էներգասպառող այլ տեսակի շենքեր:

**Էներգաարդյունավետության հավաստագրերի անկախ վերահսկման համակարգերը և ստուգման վերաբերյալ հաշվետվությունները**

1. Այն իրավասու գերատեսչությունները կամ մարմինները, որոնց իրավասու գերատեսչությունների կողմից պատվիրակվել է անկախ վերահսկման համակարգն իրականացնելու պարտավորությունը, պետք է տարեկան կտրվածքով տրամադրվող բոլոր էներգաարդյունավետության հավաստագրերից պատահական ընտրության սկզբունքով ընտրեն առնվազն վիճակագրական տեսակետից նշանակալի քանակությամբ հավաստագրեր և դրանք ենթարկեն հաստատման:

Հաստատման գործընթացը պետք է հիմնված լինի ներքոնշյալ տարբերակների կամ համարժեք միջոցների վրա՝

ա) էներգաարդյունավետության հավաստագրի տրամադրման համար օգտագործված մուտքագրված տվյալների և հավաստագրում նշված արդյունքների հիմնավորվածության ստուգում.

բ) մուտքագրված տվյալների ստուգում և էներգաարդյունավետության հավաստագրի արդյունքների, այդ թվում նաև կատարված առաջարկությունների հաստատում.

գ) էներգաարդյունավետության հավաստագրի տրամադրման համար օգտագործված մուտքագրված տվյալների ամբողջական ստուգում, հավաստագրում նշված արդյունքների, այդ թվում նաև կատարված առաջարկությունների ամբողջական հաստատում, ինչպես նաև հնարավորության դեպքում էներգաարդյունավետության հավաստագրում ներկայացված հատկորոշումների և հավաստագրված շենքի հատկորոշումների համապատասխանության ստուգման նպատակով շենք կատարված այցելություն:

2. Այն իրավասու գերատեսչությունները կամ մարմինները, որոնց իրավասու գերատեսչությունների կողմից պատվիրակվել է անկախ վերահսկման համակարգն իրականացնելու պարտավորությունը, պետք է տարեկան կտրվածքով տրամադրվող բոլոր ստուգման վերաբերյալ հաշվետվություններից պատահական ընտրության սկզբունքով ընտրեն առնվազն վիճակագրական տեսակետից նշանակալի քանակությամբ ստուգման վերաբերյալ հաշվետվություններ և դրանք ենթարկեն հաստատման:

**Շենքերի և դրանց կառուցվածքային տարրերի էներգաարդյունավետության պահանջների ծախսային օպտիմալության մակարդակների սահմանման համեմատական մեթոդաբանության համակարգը**

Համեմատական մեթոդաբանության համակարգը հնարավորություն է կտա անդամ պետություններին որոշել շենքերի և դրանց կառուցվածքային տարրերի էներգաարդյունավետությունն ու էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումների տնտեսական հայեցակետերը և դրանք փոխկապակցել՝ ծախսային օպտիմալության մակարդակի սահմանման նպատակով:

Համեմատական մեթոդաբանության համակարգը պետք է ներառի ուղեցույցներ, որտեղ կնկարագրվեն ծախսային օպտիմալության մակարդակների հաշվարկներում այդ համակարգի կիրառման եղանակները:

Համեմատական մեթոդաբանության համակարգը թույլ կտա հաշվի առնել կիրառման օրինակները, դրսի եղանակային պայմանները, ներդրման արժեքը, շենքի տեսակը, պահպանման և շահագործման ծախսերը, հարկ եղած դեպքում (ներառյալ էներգիայի ծախսերը և խնայողությունը), արտադրված էներգիայից ստացված եկամուտները և հարկ եղած դեպքում՝ մնացորդների հեռացման ծախսերը: Այն պետք է հիմնված լինի սույն Հրահանգին առնչվող եվրոպական ստանդարտների վրա:

Հանձնաժողովը պետք է նաև տրամադրի՝

- համեմատական մեթոդաբանության համակարգին կից տրվող ուղեցույցներ, որոնք անդամ պետություններին հնարավորություն կտան ձեռնարկել ներքոնշյալ քայլերը.

- էներգիայի գնի երկարաժամկետ կտրվածքով գնահատված զարգացումներ:

Անդամ պետությունների կողմից համեմատական մեթոդաբանության համակարգի կիրառման համար անդամ պետությունների մակարդակով պետք է սահմանվեն պարամետրերով արտահայտված ընդհանուր պայմաններ:

Համեմատական մեթոդաբանության համակարգով անդամ պետություններից պահանջվում է՝

- սահմանել շենքերի բազային օրինակներ, որոնք բնութագրվում և ներկայացվում են ըստ իրենց ֆունկցիոնալության և աշխարհագրական դիրքի՝ ներառյալ ներսի և դրսի



կլիմայական պայմանները: Շենքերի բազային օրինակներ պետք է հանդիսանան ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ նոր բնակելի և ոչ բնակելի շենքերը.

- սահմանել բազային շենքերի համար գնահատված էներգախնայողությանն ուղղված միջոցներ: Դրանք կարող են լինել ամբողջական առանձին շենքերի, առանձին կառուցվածքային տարրերի կամ կառուցվածքային տարրերի համակցության համար նախատեսված միջոցներ.

-գնահատել առաջնային և վերջնական սպառման էներգիայի կարիքը բազային շենքերի, ինչպես նաև այն բազային շենքերի համար, որոնց նկատմամբ կիրառվել են էներգախնայողության սահմանված միջոցներ.

- հաշվարկել (երկրորդ պարբերությամ նշված) էներգախնայողության միջոցների ծախսերը (օրինակ, զուտ ներկա արժեք)(առաջին պարբերությամ նշված) բազային շենքերի ակնկալվող տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի համար՝ կիրառելով համեմատական մեթոդաբանության համակարգի սկզբունքները:

Ակնկալվող տնտեսական առումով գնահատված շահագործման ողջ ժամանակահատվածի համար էներգախնայողության միջոցների ծախսերը հաշվարկելիս անդամ պետությունների կողմից գնահատվում են էներգարդյունավետության նվազագույն պահանջների տարբեր մակարդակների ծախսարդյունավետությունը: Սա թույլ կտա որոշել

էներգաարդյունավետության պահանջների ծախսային օպտիմալության մակարդակները:

## ՀԱՎԵԼՎԱԾ IV

### ՄԱՍ Ա

**Ուժը կորցրած ճանաչված հրահանգն իր հետագա փոփոխություններով և լրացումներով**

**(29-րդ հոդվածում նշված)**

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/91/ԵՀ հրահանգ (ՊՏ թիվ L 1, 04.01.2003թ., էջ 65) | |

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1137/2008 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ թիվ L 311, 21.11.2008թ., էջ 1) | Հավելվածի միայն 9.9 կետ |

### ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման և կիրառման ժամկետներ

(29-րդ հոդվածում նշված)

Հրահանգը | Փոխատեղման ժամկետը | Կիրառման ամսաթիվը

2002/91/ԵՀ | 2006 թվականի հունվարի 4 | 2009թ.-ի հունվարի 4 `միայն 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածների դեպքում |

ՀԱՎԵԼՎԱԾ V

Համեմատական աղյուսակը

2002/91/ԵՀ հրահանգ |Սույն հրահանգը|

1-ին հոդված | 1-ին հոդված |

2-րդ հոդված, (1) կետ| 2-րդ հոդված, (1) կետ|

— | 2-րդ հոդված, (2) և (3) կետեր|

2-րդ հոդված, կետ (2) | 2-րդ հոդված, կետ (4) և հավելված I |

— | 2-րդ հոդված, կետեր (5), (6), (7), (8), (9), (10) և (11) |

2-րդ հոդված, (3) կետ| 2-րդ հոդված, (12) կետ|

2-րդ հոդված, (4) կետ| 2-րդ հոդված, (13) կետ|

— | 2-րդ հոդված, (14) կետ |

2-րդ հոդված, (5) կետ| 2-րդ հոդված, (15) կետ|

2-րդ հոդված, (6) կետ| 2-րդ հոդված, (16) կետ|

2-րդ հոդված, (7) կետ| 2-րդ հոդված, (17) կետ|

2-րդ հոդված, (8) կետ| 2-րդ հոդված, (18) կետ|

— | 2-րդ հոդված, (19) կետ |

3-րդ հոդված | 3-րդ հոդված և հավելված I |

4(1) հոդված | 4(1) հոդված |

4(2) հոդված | — |

4(3) հոդված | 4(2) հոդված |

— | 5-րդ հոդված |

5-րդ հոդված | 6(1) հոդված |

— |6(2) և (3) հոդված |

6-րդ հոդված | 7-րդ հոդված |

— | 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներ |

7(1) հոդված, առաջին ենթապարբերություն | 11(8) հոդված և 12(2) հոդված |

7(1) հոդված, երկրորդ ենթապարբերություն | 11(6) հոդված |

7(1) հոդված, երրորդ ենթապարբերություն | 12(6) հոդված |

7(2) հոդված | 11(1) և (2) հոդված |

— | 11(3), (4), (5), (7) և (9) հոդված |

— | 12(1), (3), (4), (5) և (7) հոդված |

7(3) հոդված | 13(1) և (3) հոդված |

— | 13(2) հոդված |

8-րդ հոդված, (ա) կետ | 14(1) և (3) հոդված |

— | 14(2) հոդված |

8-րդ հոդված, (բ) կետ | 14(4) հոդված |

— | 14(5) հոդված |

9-րդ հոդված | 15(1) հոդված |

— | 15(2), (3), (4) և (5) հոդված |

— | 16-րդ հոդված |

10-րդ հոդված | 17-րդ հոդված |

— | 18-րդ հոդված |

11-րդ հոդված, ներածական մաս | 19-րդ հոդված |

11-րդ հոդված, (ա) և (բ) կետեր | — |

12-րդ հոդված | 20(1) հոդված և 20(2) հոդված, երկրորդ ենթապարբերություն |

— | 20(2) հոդված, առաջին ենթապարբերություն և 20(3) և (4) հոդված |

— | 21-րդ հոդված |

13-րդ հոդված | 22-րդ հոդված |

— | 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածներ |

14(1) հոդված | 26(1) հոդված |

14(2) և (3) հոդված | — |

— | 26(2) հոդված |

— | 27-րդ հոդված |

15(1) հոդված | 28-րդ հոդված |

15(2) հոդված | — |

— | 29-րդ հոդված |

16-րդ հոդված | 30-րդ հոդված |

17-րդ հոդված | 31-րդ հոդված |

Հավելված | Հավելված I |

— | Հավելվածներ II-ից V |